

3619

281.6

F 49

1924

EB 2001

2010

ԲԵՆԻԿ Շ. ՎԱՐԴԱՊԵՏ

ԹԱԼԱՆԻ ՎԱՆՔԸ

1. Թալանի վանքը
2. Կուսակրոնությունը անառակություն ե
3. Սնապաշտությունը քրիստոնեյություն չե
4. Դիմում հայ քահանայության
5. Եջմիածնի «Գերագույն Խորհարդու»:

281.6
2-49

Պետհրատի Ա տպարան
ՅԵՐԵՎԱՆ
1924 թ.

ԲԵՆԻԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

281.6
F-49

ԹԱԼԱՆԻ ՎԱՆՔԸ

200
2495-FG

(b) 61)

1. Փալմանի վանքը
 2. Կուսակրոնությունը անառակություն է:
 3. Մեապաշտությունը քրիստոնեականություն չե
 4. Գիմում հայ քահանայության
 5. Եջմիածնի «Գերազույն Խորհրդը»:



778

Պատմատի Ա տպարա

17587-59

ՏԵՐԵՊԱՐ

1924 ♂.

34468-4-L

002
002

ԹԱԼԱՆԻ ՎԱՆՔԸ

Պատկերված Ն. 1292, 1294, 1295, 1296, 1315.

Տիբուն 5,000



Հայ ժողովուրգ,

Հայ և ոտար թագավորներ, հայ ունկորն ու ազ-
քատը, մշակն ու գյուղացին են հին որերից հայոց
յեկեղեցուն կալվածաներ են փեշքել արել. հավատքով
վոսկի ու արծաթ, զոհար ու մարդարիտ թափել Եջմիա-
ծին, վոր սա հայ ազգի մեջ ուսում տարածի, Քրիս-
տոսի սերն ու ավետարանը քարոզի, վորք ու աղքատ
պահի, աղքոզուտ գործեր անի:

Յեղել եմի ժամանակ, վոր նա իր պարտքը կա-
տարել ե, ինչպես վոր հասկացել ե, և հայը սիրել է
այդ յեկեղեցին: Այժմ եղան չի. այժմ հայ ժողովուր-
գը յերես և թեքել և զզվում ե հոգեորականից: Իրա-
վունք ունի թե չե: Յես ասում եմ, վոր իրավունք ունի:

Ինչու. վորովհետեւ դարերի դիզածը մենք թա-
լանում ենք և կը թալանենք, քանի վոր դու քնած
ես, համր ես, կույր ես:

Փաստեր ես ուզում, հրամե, տես:

120,000 գեսետին ընտիր հողեր ու անտառներ
ունեցինք, 5 մետական մեծ գյուղ, հսկայական կալված-
ներ՝ շենքեր բօրբ խոշոր քաղաքներում, մանավանդ
Քիշնեում: Կայսերական տնից հետո առաջին կալվա-
ծատերն ելինք ամբողջ Ծուսաստանում: Այդ կալված-
ներով ինչ նյութական ու բարոյական վերաշինու-
թյուն արինք քեզ համար, մեկն աչքս կոխիր. վոչի՞նչ,
վոչի՞նչ:

Այդ կալվածները մասամբ անշնորհ տիրապե-
տությունից այս ու այն եյին ուսում. մասամբ ան-
մշակ մեալով խոպանացան, յեղած արդյունքն ել կե-

բան առաջնորդներն ու իրենց բարեկամները, սինողի անդամներն ու իրենց մերձավորները:

Բայց այդ, ազգը խոշոր կտակներ եր անում. այսք մի հարցրու թե եղ կտակների զումարները թնչ արինք մենք, թնչի վրա գործադրեցինք: Բա պաղին ու խաչ համբույրը, հոգեբաժինն ու պատկրամը, լուսպինն ու նվերները, ուխտատեղիներն ու մոմաղինը, կտակնոր ընծաներն ու մատաղները, գավառներից շարանշարան սայլերով յեկող յուղն ու պանիրը... յես զմբն ասեմ: Այս Եջմիածինը դարերով ազգի գանձարարանն է յեղել, հարստության պահեստուունը, վոր զործ անենք ազգի համար: Մի ասա, արել սիրես, թնչ ես ստացել մեղնից՝ բարոյական, մտավոր, նյութական, կրոնական: Վոչի՞նչ, վոչի՞նչ:

Դպրոցները ժողովուրդն եր պահում. բարեզործական հաստատությունները՝ նույնպես ձեմարանը, վոր զրամ հավաքելու մի խարկանք եր, իր զբամաւուին ուներ: Ուրեմն թնչ ենք տվել քեզ: Վոչի՞նչ, վոչի՞նչ:

Անա ես զրություն եր պատճառը, վոր Նիկոլա թագավորը, վոր հովանավորում եր յեկեղեցին, իր քաղաքական նպատակներին ծառայեցնելու համար, ասաց. աղբեր, եսքան հող ու հարստություն տվել ենք Եջմիածնին, շներոց զելերոց և լինում, լավ և զավթեմ, թնքս լափեմ: Առավ. ցույցեր արինք, բանակրում տանջվեցինք, աքսորներում մաշկեցինք, աղերսեցինք ազգի անունով, հետ առանք: Բայց ելի են ջուրը, եվ են ջրադացը. կարգի. չընկանք:

Եջմիածնը իր ավանդական գործն եր կտառարում և իր կատարած իր նշանաբանով ծածկում. «ծածկել գարշանքը», («ծածկել զգարշելիս»):

Բայց Եջմիածնի գարշահոտությունը, վոր մի խումք վանականների ձեռքով ամելի խորացավ և «Գերդարձուն Խորհրդով» պատկվեց, ել չի ծածկվի. գարշահոտությունը այժմ ուղեղ և ծալում և հիվանդաբեր և, ըստ պետք և ծածկվի: Յեկ ահա ծածկոցը պատում ենք:

Եջմիածնը պահանջում է, վոր ամեն մի գյուղի կամ քաղաքի յնկեղեցի տարեկան յել և մուտքի հաշվի տա իր ծիրին և հոգևոր գարչության. բարի:

Ամբողջ հավատացյալ հայ ժողովուրդն ել Եջմիածնի ծուխն և, Եջմիածնը ինչու հաշիվ չի տալիս այդ ազգին թե թնչ ունի, թնչ և ստանում, ինչու, վիրքան և թնչովես ծախսում:

Ի՞նչու Եջմիածնի անտեսությունը, ինչպես և գործունեյությունը հավիտենական զաղտնիք մնա այդ ազգից և միշտ ել ձեռք մեկնի թե տվեք, հա տվեք:

Եջմիածնի զեկավարները հաշիվ թող տան. Թնչ քեղակ վանքի 1500 պղնձեղնենը, մեր և հին ցուցակը:

Ի՞նչ յեղան չինետան հազվագյուտ թանգարժեք չինիները. մեր և ինվենտարը:

Ի՞նչ յեղան թրիմյանի ստացած ընծաներն ազգից:

Ի՞նչ յեղան ներքին գանձարանի արծաթեղենն ու վասկեղեն իրերը: Ուր և հին ինվենտարը:

Ի՞նչ յեղան Ծուրիս արքեպիսկոպոսի բոլոր միաբաններին կտակած առանձին առանձին արծաթեղենն ու վասկեղեն իրերը:

Ի՞նչ յեղան Ավետիք Ղուկասյանի վոսկեղենն և արծաթեղեն ահազին իրերը, վոր Մատթեոս յեպիսկոպոսը Թիֆլիսից ըերեց. մեր և ցուցակը Խունունցի ստորագրությամբ:

Ի՞նչ յեղան հյուրատան հարյուրավոր մահճակալ-

սերը իրենց մաքուր անկողիններով, սպիտակեղենով և արդ ու զարդով. ուր ե ինվինտարը:

Ի՞նչ յեղան կտակների գումարները. ունին ցուցակ, կամ կտակագրերը:

Ի՞նչ յեղավ ձեմարանի անձեռնմխելի զրամագըլուխը. յեթե ծախսված ե ի՞նչ իրավունքով:

Ի՞նչ յեղան ձեմարանի 200 յերկաթե մահճակալները, մոտ 300 անկողիններով, անբավ սպիտակեղենով մի քանի հարյուր ափսեներով, դանակ, պատուաքաղ, գղաներով, սեղաններով, կահկարասիքով, հըսկայական հայելիններով. սամավարներով, պղնձեղենով և այլն:

Սյո և սրանց նման շատ բանից շատերը տեղեկություն չունին. Չունիմ և յես, չունիս և գու, հայ ժողովուրդ. Այդ մթություն ե. մի գաղտնիք միայն սինոդականների, իսկ այժմ Գերագույն Խորհրդի բանալիններով կողպած:

Ի՞նչ վոսկով և վորքանով այս տարի իրր թենորոցեցին մայր տաճարի կտուրը. և ով դիտե թե հեռավոր հայության ինչպիսի «հսկայտկան նորոգության» զեկուցումն արին:

Ի՞նչ վոսկի եր, վորտեղից, վոր ստացմուո՞ւ ու արի և տրվում միաբաններին. Վորքոն և ստացվել և վորքան բաժանվել:

Վժրտեղից, ի՞նչ յեկամուտով ուտում, հագնում ապրում և միաբանությունը, Վժրքան են ստանում, վորքան բաժանում:

Վժրքան հագուստի կտորեղեն, թել, կոճակ, սապոն, սանր, մլրատ, կոշիկ և այլն ստացվել ե մինչեւ որս արտասահմանի և Ռուսաստանի հայությունից և վորքան բաժանվել:

Ի՞նչ յեղավ «յեղայրական ունության» ահաղին գույքը, ուր և ինվիերտարը:

Ի՞նչ յեղավ վանքի 85 տակառ ցեմենտը:

Ի՞նչ յեղան մեր հանդերձատան կտորեղենը, մահուլները, անոթեղենը. ուր են ցուցակները:

Ի՞նչ յեղան մեր խոշոր վալյուտան՝ Եջմիածնի գորգերը. վորքան եյին, վորքան կան և նույնությամբ կան. ուր են հին ու նոր ցուցակները:

Ի՞նչ յեղան մեր պահեստները. կամ ինվինտար, ինչպես և ծախսվել:

Ի՞նչ յեղան մեր հարուստ պինետան հին գինիները. կամ կանոնավոր մատյան հաշվետվության:

Ի՞նչ յեղան և ի՞նչ են լինում Մայր տաճարի գույքը. ուր են բոլոր հին ու նոր մատյանները, վորտեսնենք ի՞նչ ե յեղել և ինչ և մնացել:

Եսպիսի հարցեր տուր, հայ ժողովուրդ, քո կարողության «պահապան հրեշտակներին» և պատասխան ստացիր. հաշիվ պահանջիր, այ ջրատար հայ հավատացյալ վոր քեզ սիրով կողոպտել ու Աթոռին ևս տվել. ահսնենք տվածդ ազգի բարեկեցության, լուսավորության վրա և ծախսված թե վոչ:

Ես քո հաշիվերի համար մենք մի քանի ընկերներով շատ ենք հալածվել զողերից, այ ժողովուրդ, եղ իմացիր զու:

Մի մեռած արքեպիսկոպոս, վոր ձեմարանի տեսուչ եր (Ժառանգավորաց յերկասյան ուսումնարանից), ձեմարանից բաներ եր գողանում ու իր բնակարանը զրկում. զեռ սարկավագ եյինք. Փարեզին սարկավագը՝ ավագ վերակացուն բողոքեց. «յա, յես յեպիսկոպոս, զու սարկավագ, կարամ ըլնես ինձի հակառակ»

կանչեց եղ ջոջ աղեն և հետեւալ որը մեզ ընկերներով
ձեմարանից վանք քշեցին:

Ահա ես և Եջմիածնի մատայնությունը, հոգեսր
փաշաների մտածելակերպը: Վոր այդ հաշվետվության
առկից Եջմիածնի ջոջերը չեն կարող դուրս դալ, եղ
ևս համոզված եմ: Իմաստերը քեզ ել կը համոզեն:

1. Հումիկ արքեպիսկոպոսը Քիշնևի կալվածքից
գողացել եր 40,000 ռուբլի: Քննեցի: ապացուցեցի: Մի-
նողի անդամները Մեսրոր, Մատթեոս, Բաբկեն պաշտ-
պանեցին գողին, գողոնքը քարին քսեցին:

Այս մասին կարդա իմ «Եջմիածնի արդարու-
թյուն» գրքույկը և «Անարդարության յերեսից»:

2. Մարցի կալվածներից գողացված եր 35.000 ռ.
փայտ և տախտակ: գողությունը բռնեցի Դսեղ գյու-
ղում և անտառի մեջ՝ դատի ավի գող կառավարչին,
վոր Թիֆլ. առաջնորդ Մեսրոր յեպիսկոպոսի բարե-
կամն եր. գործը քարին քսեցին:

3. Կորյուն յեպիսկոպոսը 372 փ. աղ եր ծախել
գողունի. քարին քսեցին:

4. Վարդան վարդապետը հանդերձատանից գողա-
ցել եր թոփով կտորներ, թափիշ. ոյուժիներով գանակ
պատառաքաղ, սասլոն, մի խուրձ պատրույգ, ցորեն և
այլն: Իրեւ վերստուգիչ քննիչ, զեկուցել եմ Ժամա-
նակին վանական ջոջերին. քարին քսեցին:

5. Զավեն յեպիսկոպոսը, այս մասնագետ թալո-
շին, կերել և Հոեփիմեյի վանքի մոտ 11 խարվար ցո-
րենը, գարին, Անդրանիկի վանքին նվիրած վոշխար-
ները, կովերը, ձին և շատ գույքը: Վանական խորհուրդը
ինձ վերաստուգչիս առաջարկեց քննել այդ գործը. սկսե-
ցի: Ինչ սիլի-բիլի արին Զավենի հետ, չը դիտեմ. բա-

նավոր կերպով քննությունը գաղարեցնել ավին. քա-
րին քսեցին:

Զավեն յեպիսկոպոսը ոգտվելով վերջին հեղաշր-
ջումից թալանել և վանքի այն բնակարանների գույքը,
վորոնց մեջ խորհրդացին պաշտոնյաններն եյին ապրում.
ահագին քանակությամբ գորգեր, անկողիններ, սամա-
վարներ, չեմողաններ և զցել եր անմեղ սասունցինների
վրա: Զավենի սելով տանելիս տեսել ե Բարդուղիմեոս
յեպիսկոպոսը, վորի մեծ գորգը վերջերս ընվեց Զա-
վենի մոտ. Նրա մոտ բռնվեց և Գարեգին յեպիսկոպո-
սի գորգը: Ես գույքի գործը բացել ե Մեսրոր յեպիս-
կոպոսը ինձ հայտնելով և Յեղիշի վարդապետը, վոր
ափսոս մեռափ: Պաշտօնական գրով դիմել եմ միարա-
նական ժողովին իրեւ վանակ. կառավարության նա-
խագահ և պահանջել, վոր գողոնքը հետ պահանջվի: Բա-
նից դուրս յեկավ, վոր գործ բաց անող Մեսրորն այդ
ժամանակ Զավենի հետ բանակցության մեջ եր և Գերա-
գույն Խորհուրդ եյին գարբնում: Գործը քարին քսեցին:

Հայ-թրքական աղետի որերին Զավենը Բագվում
2000 ռուբլի փող եր հավաքել Յերևանի առաջնորդին
գրելու մասնակած հայերի համար: Պահանջեցին, «Հովտի»
մեջ ել գրեցին թե տուր այ մարդ, ամոթ եւ: Զավենը
քարին քսեց:

Խեղճ Գարեգին յեպիսկոպոսի դասախոսությանց
փողերը Բագվում հավաքեց, կերավ. աշխատեց Գարե-
գինը կուլ տվեց Զավենը:

Նույն Զավենը գինետնից 40 վերը գինի, առա-
նյակ վերը ողի և քաշել այս ու այն պատրվակով և
մոմենտներից ոգտվելով զցել կամ զինվորների կամ սա-
սունցոց վրա: Ախար ես ել մի առանձին քաջություն

ե, յեպիսկոպոսական քաջություն, հանցանք գործել մեկ, անմեղի վիզը փաթաթել յերկու նսպես և կտղմած ված եղ յեպիսկոպոսի խիզճը:

Վանական կառավարության նախագահ յեղած ժամանակը Յ իսարվար ցորեն և յուրացըել վան, կառավ. քարտուղարը. ժողովում պատասխատվությունը գըցեցին նախագահի վրա. վարպետ նախագահը խորհուրդ տվեց քարտուղարին հանձն առնել տալ. Խոստացավ քարտուղարն ասել «Բնչ անեմ թե բերանս բանամ» ու չը բացեց. հաստատ համոզված լինելով անշուշտ, վոր Զավենը կողնի, վոր Քարին քան. Եղանք ել յեղավ:

Նույն Զավենի վրա պարագ կա ժողովով դրված 16 փութ հաց, մի սամեն փայտ, բացակա վարդապետի մոտ մի տարգա հացը. այս ամենը տարել ե ապորինաբար և... մարսեց: Բավական և սրա մասին, կարծեմ ընթերցող արգեն գլուխդ պտույտ յեկավ սիրտ խառնեց:

6. Տիրայր յեպիսկոպոս Ռ սա արիստկրտա և, գողությունն ել արիստոկրատական: Հավատավոր նախինանցիները Եջմիածին ուղարկել եյին 1919 թվին սրբազն անոթներ՝ սկին, մաղզմա, մասնատուի, հաշեր 32 կտոր մի փութ արծաթ վոսկեջուր հարս ություն արկղով. ազգեցիկ դիվանապետ եր, գողացավ կերավ. բացեց:

Յեպիսկոպոսական դատ յեղավ. ծիծաղելի դատ. վորոշեցին 15,000 ռուբլի կովկասյան բոն առներ այսինքն մի քանի մասնիթ վոսկով, բայց սիրտն ել շահելու համար Ամերկայի թեմի առաջնորդ նշանակեցին:

Այ հավատավոր ժողովուրդ, յեպիսկոպոսները, վոր իրենց սրբությունները գողանան, ծախեն, ել Բնչ չեն

գողանա. ախր տանելու բան և այս. եսպես անպատիթ շահատականություն և սրբազնություն կը լինի:

Նույն յեպիսկոպոսը ներքին դանձարանից վերցրել ե մի արծաթե սուպնիկ, մի արծաթե շերսի, 12 հատ արծաթե սեղանի գղալ, 12 հատ նման թեյի գղալ, ել յես ինչ գիտեմ ինչ. չես հավատում, Մուշե յեպիսկոպոսի քննադատականը պահանջիր, կարդա:

7. Տաճարի բազմափակ խորանից թանգարժեք խաչեր ու մետաքսե շուրջառներ գողացվեցան, վերջինն ներս բռնվեցան Զահվարապատ վյուղում յերեխաների վրա վորպես բլուզ. կտորները տաճարում: Դողությունը ձգեցին մի անմեղ վարդապետի վրա, վոր բացակա եր Եջմիածնից: Մահվան անկողնում միայն անմեղին զըրպարտող մի վարդապետ խոստովանեց, զղջաց վոր Բնքըն և արել և արտասվելով ներողություն խնդրեց անմեղից ու մեռավ:

8. Սոսկալի ավերածություն եմ բռնել յես 20 թվին (յերբ վերստուգեցի) տաճարի թանգարանում. Նկարագրել անսահման կորուսոր, զեկուցել եմ կծու լեզվով և վանական խորհրդին և վեհափառ Կաթողիկոսին: Ի՞նչ արին. զայրացան, վոր կծու լեզվով եմ գրել ու... քսեցին քարերին:

9. Մատթեոս յեպիսկոպոսը կերել և յեղբայրական ոգնության կառքը, մի քանի տասնյակ տակառ ցեմենտ, մութն և թողել յեղբ. ոգնության 10,000 ռ., յուրացըել և ահազին գույք (ահս Սինողի գործերը 1912 թ. № 57-սկդանի գիրք—1908 թ. № 12, 1916 թ. № 7, 1915 թ. № 39, 1915 թ. № 37): Այս գործը բացել և Զավենը (Սինողի քաղվածները յես եմ տվել) միաբանական ժողովի պաշտոնական նիստերում գրավոր ու բա-

նովոր, յերբ Մատթեոսն ել Զավենին եր մերկացնում-իրար անվանում են և սպիտակ, փողոցային, գող, թա-ւանչի։ Ինձ նույն եր նույն ժողովում բացականչել՝ «ըռափո», յերկուսդ ել իրար արժեք։

Ասա, հայ ժողովորդ ես յեպիսկոպոսության ե։ Այս բոլորից հետո ինչ արին Գողոնքը Մատթե-սի շալակը դրին, փորձես ոմիտ ու բարձրացըին Բագիի առաջնորդական աթոռու Նույն այս մարզը յերկու վոսկէ ժամացույց և հանել գանձարանից մինը Բաֆֆու ժամացույցը, փորի կինը վիպասանի մահվա-նից հետո Եջմիածնի թանգարանին եր բերել նվեր վիպասանի հիշատակին։

10. Զավենին մրցակից և Արիստակես վարդա-պետը, մի տղետ մարդ, բայց մի ճարպիկ գող։ Արտա-քինով «սուրբ», սուտ ճգնավոր, չափազանց ժամասեր։ Դյուտ յեպիսկոպոսի հատուկ հովանափորյալը։ Սա Ա-պարանում ահագին քանակությամբ բուրդ և գնել պա-կաս գնով գանքի համար, իսկ վանքից ստացել շատ ավելին։ Բռնվել և խարդարներով ցորենի զողության մեջ, զոր հանել են նրա տնից և փոխադրել վանք։

Աւզտերի բեռներով Զորանքարի թուրքերին գո-զունի ցորեն և ծախել կալից։ Դիշելը բեռնած ուզտե-րին են բռնել։ Յեղբայրական ոգնության մոտ 10,000 թալանի վոչխարի մեծ մասը կերել ե։ Սևանի վան-քից գողացել փախել եր գանքի արծաթեղենը։ Իրեկ կաթնատան կառավարիչ նա 1923 թ. վանքին տվել է 5 մատակից, 40 վոչխարից, 18 կոմից միայն 12 փ. կարագ։

Այս գյուղացի, հայ գյուղացի, ախր գու գիտես, զոր 12 փ. կարագը կը տան միայն 3 մատակը։ միա-

տան ինչ յեղամ։ Այս բոլորը քսեց քարերին, միշտ անպատճի և Գյուտ յեպիսկոպոսի հովանափորությամբ միշտ վանական կառավարության մեջ։ Այս ամենը և ավելի խայտառակը օրտ մասին կարելի և իմանալ Մուշի յեպիսկոպոսի պաշտոնական քննադա-տականից։

11. Թալանված և ձեմարանի կանկարասին, պա-տի հսկայական հայելիները, Հսկիսիմեյի վանքի 20 խալվար հացահատիկը, 90 վեղրո գինին, գանձարան ձգված կանխիկ դրամը, Հսկիսիմեյի թանգարժեք մահմար վարդապուրը, վանքից գյուղ տարված կարա-սին ու անոթեղենը։

Այս գործերը կատարել ե Արմեն վարդապետը, Մեսրոբ, Բագրատ, Մատթեոս յեպիսկոպոսների մտե-րիմ ընկերն ու հովանափորյալը։ Այդ գործերը բաց և արել Արտակ վարդապետը (այժմ Զանգեզուրի յեպիս-կոպոս) 1922 թ. հունվ. 11 թվակիր պաշտոնական թղթով հանուն միաբանական ժողովի։ Ի՞նչ արին քարին քսեցին։

Արտակ վարդապետը իր փաստալի զեկուցումը վերջացնում է այս խոսքերով. «Վանական քննիչները (Մատթեոսն եր) միշտ անձնական հաշեմներ են մաք-րել և մժղուկները քամելով ուղարկեր են կանել»։

12. Ավերգած տաճկական Հայաստանի հայ ժո-ղովուրդը, յեկեղեցականները իրենց տուն ու տեղը, գույքն ու սիրելիներին կորցնելով, անկորուս, գրկով բերին հասցրին Եջմիածին իրենց տաճարների ու վան-քերի հարստությունն ու սրբությունների զգացներ, թագեր, սաղավարդներ, խաչեր, սկիններ, մատանի-ներ, խալիններ և այլն։

Մի հարցուք եղամիածնի ջոջերին, ինչ ցուցակով
ստացաք, թէր են գուցակները, ինչն և մասել:

13. Իիմ անսպատի Հովհաննես վարդապետը 18
թվականին իր անձի վտանգով անսպատի հարուստ
գույքը ազատել և բերել եւ մանրամասն ցուցակով
հանձնել Եջմիածնին: Մի ամիս առաջ (այս տարի)
Բաղդատից յեկել եր գաղթականներին մեր յերկիրը
փոխադրելու գործերով. ներկայանում է Գերազույն Խոր-
հրդի ավագ Մեսրոպ արքեպիսկոպոսին, խայրում եւ իր
բերած իբրեւը իր ցուցակով ստուգել և իրեն տպահո-
վագիր տալ իր ժողովրդի առջև պարզերես մնալու
Յուցակը կորել եւ համառոտ մի ցուցակ են ներկայ-
ացնում, զորի մեջ չը կան թանգարծեք խաչեր, մա-
տանիներ, պնակներ: Աղերսում եւ թե իմ ցուցակը
տվեք Մեսրոպ յեպիսկոպոսը անսպատիում եւ մարդուն
սպառնում, թե զու ով ես զոր համարձակվում ես մեզ-
նից հաշիվ պահանջել: Խեղճ մարզը մղկտալով քաշվեց
գնաց իր Բաղդատը, յերեկ հաշիվ տալու թե ովքեր են
նստել Եջմիածնում:

Եսքանը բավական եմ համարում. ևս պատկերը
ամեն տարի կրկնվող պատկեր եւ. Ախր եջմիածինը
հարստության ծով լիներ, կցամաքեր, սար լիներ կը
հաշեր ես աղտեղի ճանապարհով. Ախր եղ հարստու-
թյունով կարելի եր կրթական, գիտական, բարեգոր-
ծական մեծ գործ անել, յերկիր վերաշնել գոնե վան-
քերը կարծանումից փրկել. Բայց վոչ այս և վոչ այն:

Այսպիս տարիներով թալանվում և եցմբածինը,
հավատարիմ մնալով իր նշանաբարնին՝ «Ճաճկել զգար-
շելիս»։ Մաճկելու ձանապարհներն ել ենքան շատ են,
վորքան շատ են գողերու։ Մեկն ասեմ:

Փամանակով վանքի ագարակի կառու վարիչ եր վոմ Մամբրե վարդապետ, ազգեցիկ յեղիսկոպոսները սրանից ծածկաբար խող ելին ուզում, գառ, փթերով յուղ և այլն. Խնչ աներ Մամբրեն. յելլց մատյանի մեջ անհայտացած գառների, արջառների, վոչխարի դիմացը դրում եր՝ «զունք կերին», «գայլը կերին», Յեկ սինոդում հաշվեմատյան ստուգողներին ու «գայլը» իրար յերեսին նայում, ժամանում ելին, մատյանը հաստատում և գովում իմաստուն վարդապետին, վոր կարողանում եր «ծածկել զգարշելիս»:

Ես բոլորից հետո զեռ համարձակվում են աշխարհ
լցնել թե մենք սոված ենք. սուտ ե, մենք յերեք սո-
ված չենք յեղել, թեպետ արժանի յենք, վոր սոված
մայիսնք: Մի փոքրիկ հաշիվ տամ քեզ, հայ ժողովուրդ-
եցմիածնում 16 «միաբան» կա. եղ 16 միաբանը մի
տարում կերել և 57 վոչխար, 18 տավար՝ կով ու յեղ:
եղ համեմատությամբ ել գնա բրինձ, յուղ, լոբի, չիր,
միրգ, ձուկ, կարտոֆիլ, կաղամբ, և բոլոր մթերքներ
ինչ վոր գործ և դրվում կերակուրների մեջ: Վանա-
կան ակզանի վրա ամեն որ չորս տեսակ միայն նա-
խաճաշ ենք ունեցել, կատլետ, ձուկ, նույնիսկ դոշ,
լոբի, մածուն, կարաղ, ձու, զալ զառերմա, թթվեղեն,
միրգ և այլն. նախաճաշին անմիջապես հաջորդել և
յերկու տեսակ մսեղեն և յուղեղեն կերակուր, վորոնց
վրայից խմել ենք անուշ զինին: Տարվա մեջ վոչ մի
որ պաս չենք պահել բայց մեծ պասին մեր քարո-
դիչները փոր ելին պատում բնմերի վրա թե՛ ապաշ-
խարհեցեք, պասի որերն են, պահեցեք, վոր քրկներ
և այլն:

Սաս ինգրեմ, հայ ժողովուրդ եսքան, սուտն ու
կեղծիքը, բնչպես կարող ե տեղավորից բարութուի
աշակերտի հօգու մէջ: Միթե սա անպատճեւ է Ամե-
տարանիր աննման վարդապետի հզարամատիւ

7/XI 1922

Եջմիածնի ձեռքում կտ այժմ յերկու ջրաղաց 7
աչքով, տարեկան վաստակ ե բերում 100—120 խալվար
հաց: Ուրեմն 16 միաբանը հացով շատ ապահով են:
Ունենք 44 գեսյատին ընտիր այգի (կարծեմ բացի
Փարաքարինը): Յեթե այդ այգիները լավ մշակվեն,
իմ հաշվով տարեկան 20,000 մեղրո գինի կը տան:
Ունենք 40 նեսյատին ել վարելահող: Ի՞նչ ես կարծում
հայ ժողովուրդ, յեթե մենք անձամբ մշակենք (ինչ
բարձր վայելչություն ե բան ու գրիչը, գիրքն ու
մաճը փոխեփոխ ձեռք առնել) 16 հոգիս ել քաղցած
կը մնանք:

Ախր ուրիշ ի՞նչ գործ ունենք, բացի ինտրիգներից:

Հայ ժողովուրդ, յես ձեզ ասացի ճշմարիտը, յե-
թե ազգ ես, յեթե սրտացավ ես, չես լոփ. իսկ յեթե
կը լոես, չես գա զատ անելու, կը նշանակե քեզ ար-
ժանի «սուրբ հայրելը» հենց եղ յեպիսկոպոսներն են,
վոր կան՝ բարով վայելք իրար:

Յես պարտքս կատարել եմ աստիճանաբար,
Քրիստոսի պատվերի համաձայն. նախ զգուշացրել եմ
գողերին, հետո զրել եմ վանական ջոներին, հետո
ջղայնացած, խոստովանում եմ կծու լեզվով բազմաթիվ
զեկուցումներով զեկուցել Վեհափառ Կաթողիկոսին.
զրել եմ նույնիսկ թե ճար արեք, Վեհափառ տեր, Եջ-
միածնում շատ քիչ բացառությամբ քրեյական հանցա-
ռործների մի խումբ ե նստած:

Յեզ վորովնետե վոչինչ չեղավ, ընդհակառակն
թալանչիները քաջալերվեցան, յեպիսկոպոս, առաջնորդ
յեղան, «գերազույն» սարքեցին, բարձր պաշտոններով
վարձատրվեցին, ինձ մնում եր վերջին պարտքս կա-
տարել. զեկուցանել հայ ժողովրդին, վոր վերին տերն

ու անորենն ե իր յեկեղեցուն, հենց ինքը կենդանի
յեկեղեցին եւ:

Յեթե կամենում ես ասածներս ստուգել, ահա
քեզ ցույց տամ պաշտոնական աղբյուրները:

«Վահակ, Խորհրդի» բոլոր արձանագրությունները
1919 թ. ականած միաբանական ժողովների բոլոր ար-
ձանագրությունները նույն թվից. Սինոդի վերոհիշյալ
գործները. ազնիվ Մուշե յեպիսկոպոսի փաստացի և մեծ
քննադատականը՝ Արտակ յեպիսկոպոսի վերոհիշյալ
գեկուցումները. Զավեն յեպիսկոպոսի բողոքներն ու
Մատթեոս յեպիսկոպոսի բացատրությունները. իմ
վերառագչական և նախազահական զեկուցումները խոր-
հրդին, միաբանական ժողովին, Վեհափառ կաթողի-
կոսին, կոսկագրերը և բոլոր հաստատությունների
հին ինվենատրները: Այդ տեղերում դու ավելի կը
գտնեա. իմ ալյալները թեթեակի են և համառոտ:

Իսկ յեթե «առուրբ գողերը» կոչնչացնեն այդ բո-
լորը (իսկ այդ բանին ընդունակ են, վորովհետեւ Հռիփ-
սիմեյք գույքի ցուցակը ես եմ կազմել իբրև վեր-
առուցիչ և ինձ հետ ստորագրել ե Վարդան վարդապետը,
չը գտա գործերում, վորից հետո, ամեն ինչ կորավ),
այդ կը լինի «գողություն գողությանց»:

Մի գմղք ել հիշեմ «Գերագույն Խորհրդի» փոք-
րագությունից. Վեհափառ վանական կառավարության
(վորի նախագահն եյի 1923 թ.) հրամայել եր, վոր
շաթիրին մի տարվա ոռնիկ տանը 120 սուրբի, վոր
չեր ստուգել ըստ վեհ. վկայության: Կատարեցի հրա-
մանը: Գերագույն Խորհրդի անդամները, վոր եղ ժա-
մանակ արդեն խոսվել եյին կաթողիկոսից և «գերա-
գույն» կազմելու գաղտնի գործն եյին սկսել, պահան-

ջեցին, վոր այդ փողը յետ առնվի, թե կաթողիկոսը
ճիշտ չի ասել. «Րակարգի նյութ շինեցին, կաթողի-
կոսին ստախոս դուրս բերին և այն աստիճանի վր-
ավորեցին, վոր կաթողիկոսը կարգադրեց այդ դու-
մարը իր ոռնիկից բռնեն յերեք նվազում»:

Այս փոքրոցի վարձունքի դեմ յետ թղթով բողո-
քեցի, խնդրեցի չարձանապեր, հիշեցրի վոր իրենցից
վոմանք հազարներ են կերել, ինչու յետ չեն տալիս
և այդ 120 ոռութու շուրջը փոթորիկ են հանում իրենց
կաթողիկոսին անպատճելով. գոնե առանց արձանա-
գրության յետ առնեն: Բայց խոսքս չանցագ:

Դիտես ինչ կա, հայ ժողովուրդ. առաջ Եջմիածնի
գույքի վրա հսկող պրոկուրոր կար՝ ելի մի սանձ եր:
Մենք արտնջում եյինք, վոր պետության նեկայա-
ցուցիչը կանգնած եմ եր զլիխն, մուրճը ձեռին, բողո-
քում եյինք, վոր ազատ յեկեղեցին բռնության տակն ե:

Հիմա ել վոչ վոք չը կա հսկող, յեկեղեցին ազատ
ե, բայց թալանվում ե՝ իր յեկեղեցականների ձեռքով:
Հիմի լնչ անենք. քրեական հանցանքներ ևն
կատարվում. մվ պիտի հոգա այդ մասին: Միայն դու.
թե դու ել լոես, ամեն ինչ վերջացագ...

Հավաքիր, արի, սիրելի ժողովուրդ, յեկեղեցու
վիճակը տես, աչք ածիր թալանի վանքը, վոր աղա-
ղակես:

Թող կորչին թալանչիները.

Թող կորչին գողերը.

Թող կորչին կեղծարարները.

Թող կորչին բռնացողները. և

Թող վերականգնի մեր յեկեղեցին միայն ավետա-
րանի նիմուննով:

Դուք ել չպետք ե լոեք, սիրելի ընկերներ, վոր
ինձ մենակ թողիք գեհենի մեջ, Եջմիածնի փչությունից
հեռացած նախկին վանականներ: Դուք ել ինձ պես
համոզված եք վոր Քրիստոսը միայն սոցիալական
պարտաճանաշության կրոն և ստեղծել սիրո պսակով.
Ճեր ազգի սերը պահանջում և ձեզնից, վոր չլոեք բա-
րոյական այս անկման հանդեպ:

Դուք ել չպետք ե լոեք յեկեղեցու բյուրոկրա-
տիայից խեղդված, կողոպտված, սովալլուկ քահանա-
ներ, յեթե ձեր մեջ վառ մնացել և ժողովրդասիրու-
թյան, ճշմարտության և արդարասիրության բոցա-
վառ կայծը:

Զայն հանեցեք, զրեցեք, խոսեցեք, մի վախե-
նաք վոչից, յեթե ձեզ սիրում ե ձեր ժողովուրդը:

Բոլորդ միասին յեկեք «ձեր մորն այցելության»
և փրկեցեք ավագակների ձեռքից:

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ Ե



Հայ ժողովուրդ, լավ ուշք դարձրու այս վերնագրին և լսիր ինձ:

Քրիստոսը ամուսնական խնդիրը բոլորովին ազատ է թողել. ով կամենում է, պետք է ամուսնանա. ամուսնանալը լավ է պոռնկությունից:

Պողոս առաքյալն ասում է. «Ամեն մարդ թողիր կինն ունենա, վոր չը պոռնկանա»: Նույն առաքյալը. «Ով վոր ժուժկալ մնալ չի կարող, թող ամուսնանա. վորովհետեւ ավելի լավ է ամուսնանալ քան վառվել»:

«Յեպիսկոպոսին վայել ե, վոր մի կին ունենա»:
«Ամուսնություն ամեն կողմից պատվական և և անկողինը սուրբ»:

«Ամուսնությունը Աստծու արքայության համար առաքինություններ սովորեցնող մի դպրոց ե» (Տերապիանոս):

«Ամուրիությունը հակառակ է բնական որինաց. յեկեղեցին ընկել ե ծայրահեղության մեջ՝ բնավ չամուսնանալ» (Ներսիս արքեպ. Մելիք-Թանգյան):

«Յեպիսկոպոս, յերեց կամ սարկավագ չը հեռացնեն իրենց կնոջը յերկյուղածության պատճառով. յեթե կը հեռացնեն մերժվեն յեկեղեցուց. իսկ յեթե համարին, թող կարգալույժ լինեն»: (Առաքելական կանոն 5-րդ հոդված):

«Յեթե յեպիսկոպոսը, յերեցը կամ սարկավագը կը հրաժարվեն ամուսնությունից, մսից զինուց, վոչ թե ժուժկալության համար, այլ պիղծ համարելով և անարգելով արարչագործությունը, դրանք կամ ուղղը-

վեն կամ կարգալույծ լինեն։ (Առաքել կանոն 46-րդ հսկած։)

«Նիկո տիյեղերական ժողովում վորոշվում ե յեղցականների ամուսնությունը ազատ թողնել ովկամենում ե թող ամուսնանա»։ (Սոկ. յեկ. պատմ.)։

Հայոց յեկեղեցին յեկեղեցականների ամուրիություն չեր ճանաչում մինչև օրդ դարը։ Հայոց կաթողիկոսներն ամուսնավոր ելին։ Խաղ յեպիսկոպոսը վորին՝ երրի սուրբի, յեկեղեցին տոնում ե, ամուսնացած եր։ Նրա աղջիկը Ապահունյաց իշխանի կինն եր։

Մեր յեկեղեցին պաշտոնական վորոշում չունի ամուրիության համար։ Այդ հակարնական կանոնը մտել ե մեր յեկեղեցին հունաց ազգեցությամբ։

Ամուրիությունը մտել ե քրիստոնեյական պաշտոնական յեկեղեցու մեջ հեթանոսությունից։ Միհրական կրոնից, Հռոմի վեստական կույսերի ամուրիությունից, հնդկական կրոններից։

Իսկ Քրիստոսը կործանել ե բոլոր հեթանոսական կրոնները։

Կուսակրոնությունը հակարնական ե, և դարձել ե անառակության աղբյուր։

Յերբ յեկեղեցական ամուրիությունը հայոց մեջ մտավ, նույն յեկեղեցու մեջն ել բուն դրեց անառակությունը։ Այդ պարզապես յերեւմ ե յեկեղեցական այն բազմաթիվ պատժական որենքներից, վոր սահմանված են անառակ յեպիսկոպոսների և վարդապետների համար։

Սակայն վերջին ժամանակներում հայոց յեկեղեցու ամուրիությունը լկտի անառակություն ե դարձել իսկ վանքերը՝ անառակության շիռլա, վորտեղից անառակությունը ծավալվում ե հայ ժողովրդի մեջ։

Այդ աստիճանի լկտի անառակության դեմ բռնոքի ձայներ լսվեցին։ Մի քանի տարի առաջ յեկեղեցական ժողովի մի փորձ յեղավ Եջմիածնում։ Ժողովականների մեջ ձայներ բարձրացան ամուրիության դեմ, պահանջ գրին վերացնել ամուրիությունը. Թիֆլիսի քահանայությունը իր ժողովներում վորոշել եր ամուրիությանը վերջ տալ և տպագրված վորոշումը ուղարկել եր Եջմիածին։

Սակայն բազմակնուրբան սռվոր ամուրիները խեղզեցին այդ ձայները յեվ բարեփոխուրյունը չանցավ։

Հին վանականությունը՝ ամուրիության հետևանքով և կանանց սակավ այցելությամբ վանքերին, տարված եր հակարնական ախտերով, վորի պատճառով շատերը խեղանդամ ելին դառնում, մեջքի ուղեղի չորացումով (սyxotka) և վոտների անդամալուծությամբ քարը ելին տալիս իրենց թշվառ գոյությունը մինչեւ վաղաճաս գերեզման։ Արվամուրիունը ընդունված բարք դարձավ վանքերում և անմեղ ու մոլորված պատանիները հասակն առնելով արյունաբրությամբ դարձան վանքերին ու վանականներին, մեղավոր չեն վանքերում դաստիրակություն և ուսումն ստացած տղայքը, վոր այսոր թքում են վանականների յերեսին և իրենց պրոպագանդան ուղղում վանական կյանքի դեմ։

Դրանցից մինը՝ ձեմարանի մի աշակերտ, պատվի զգացմունքի զարգացումով, ըստ կարողացավ տանել ընկերների ակնարկները իր տխուր պատանեկության մասին և ձեմարանի յերկրորդ հարկի լուսամուտից իրեն ձգեց, ջարդ ու փշուր յեղավ և մեռավ։

Ավելի պակաս մոլի վանականները հակարնա-

կանին եյին դիմում։ Լեզենդա չե, վոր Եջմիածնի շենքերի պարիսպներից գեղերները, յերբ դարբասները փակ եյին լինում, պարանով կապած կողովով կանայք եյին քաշվում պարիսպների վրայով դեպի վեր. լեզենդա չե, վոր յափունջիներում կողոված, փափախներով ծածկված կանայք մթանը վանական խցերն եյին մտնում։

Իրականություն ե, վոր 90-ական թվականների նոր սերունդը, ունկորները, Թիֆլիսից հեռագրով անրարո կանայք եյին պատվիրում և «դրախտի գեշերներ» սարքում Վեհարանին կից Լարյուրինթոս սենյակներում Բանն այնտեղ հասավ, վոր իր մաքրությունը պահած Տաճատ վարդապետը (հետո վերաբերն հանեց) ատրճանակով եր սպառնում այդպիսիներին և փախցնում կանանց։

Վերջին տասնամյակներում յերբ վանքն այլև վանք չե, ամենաուժեղ հոսանքը դեպի վանքը կանց հոսանքն ե. անառակությունն սկսավ սահմարձակ դառնալ։

Լենինականի մի քահանա բողոքել եր սինորին իր վատավարկ կնոջ գեմ և խնդրել եր լուծել իր ամուսնությունը, կինը վրեժ առավ բոլոր վանական ջողերից. բոլորին այցելեց. նրան ջոջ սուրբերը սիրով ընդունեցին. «Ճամապահ» իր վոտքովն և յեկեր։ Յեզ հանկարծ 2-3 տմիս վանականները ժամ չեյին դալիս, հիվանդ եյին. Ի՞նչ եր յեղել. վոչինչ. «Քամին տվել մրսել եյին...»։ Այս դեպքի մասին յես ժամանակին գրել եմ «Հովտում» և ավելացրել. «Ամուսնությունը, սերը արգելված ե Եջմիածնի համար, իսկ պոռնկությունը իրավունք ե»։

Անա մի յեպիսկոպոս, վորի մոտ շաբաթը յերկու անգամ կառքով մի կին եր դալիս մոտակա Ո. գյուղից: Կառքը գալիս վանականները սովոր եյին ասել. «Վանքի հարսը յեկավ»։ Յեզ այդ վողորմելի «վանքի հարսն» վերջիվերջո ազգականները քարշ տվին տարան Հովտումնեյի վանքի պարիսպների տակ և սպանեցին։

Անա մի յեպիսկոպոս ճանկել եր մի անմեղ սիրուն աղջիկ Նվարդ անունով, իրուն աղախին. Նա այդ յեպիսկոպոսի մոտ փշացավ, նրանից ել հիվանդացավ. տեղափոխվեց մի վարդապետի մոտ և ինչ վոր ստացել եր յեպիսկոպոսից, իրավամբ հաղորդեց վարդապետին։ Վարդ ու Նվարդ քեֆ քաշեցին, բայց մի քանի ամսից հետո այդպիսիներին գթացող Եջմիածնը իր «սիմալական» վարդապետին Թեֆլիս ուղարկեց բժշկվելու ուժն ամսով։ Աղջիկը մարդու գնաց. լսեցի, բացվել և բանը, հայտնողն յեղել և հիվանդությունը և աղջկան մարզը սրախողնող և արել։

Անա մի ուրիշ վարդապետ, վորին Նոր-Բայազեդում մի մեծ ընթրիքի ժամանակ մի գինվորական թուրը հանած փախցրեց սեղանից. վարդապետը վեղարը թողած փողոցն ընկավ ու ազատվեց. Ի՞նչ եր յեղել. հենց սեղանի վրա լավ չեր պահել իրեն սպայի կնոջ նկատմամբ։

Նույն վարդապետին յերկու տարի առաջ Կիոլավողսկի յեկեղեցում, պատարագի ժամանակ մի տղամարդ ջարգեց փայտով, նրա խաղերի համար կնոջ հետ։ Վարդապետը փախավ տեղից, վեղարը հանեց դրկեց Եջմիածն, աշխարհականացավ. անցավ Նախիջեվան, նշանվեց, այս ել անհաջող անցավ, վերստին վանք յեկավ, վեղարն առավ և «Գերագույն Խորհրդի» սիրելին դառնավ։

Ահա մի յեպիսկոպոս, վորին վաղարշապատի այդիներից մեկում մի գաղթական կնոջ հետ բռնեցին հանցանքի մեջ այսու հարևանները և թքեցին յերեսին:

Նույնի փորում մի յեղան ցցելու փորձն արակ մի տղա «սրբազնի» աղախնու պատճառով, բայց չը թողին:

Նույն յեպիսկոպոսը ամենահայտնի անբարոյական կանանց ընդունում և ճանապարհ գնելիս, որը ցերեկով, ափաշկարա մի-մի մեշոկ ցորեն եր դնում կնոջ բերած ծառայի շալակին ու զրկում:

Այս մարդու համար չարածնի պատանիները մի զատկական նվեր եյին տվել յերկտողով ու կպցը ել նրա պատին, վոր հետեւյալն ե. «Համ աքլոր ես, համ հավ ես,—պառակ տեսնես կամացես, աղջկ տեսնես՝ կը կանչես»: Տարիներ առաջ Եջմիածնում մի խումբ լվացարար ուսւ կանայք կային. վանականներն իրենց լվացքի անունով հրավիրում եյին նրանց. բարձրացակ մի մեծ խայտառակություն, գործն հասավ գավառպետին, վորը «բարի յեղակ խնայելու վանականներին, վոր որենքով արտօնյալ եյին»:

Ահա մի տարեց վարդապետ վորի կյանքը միայն անառակությամբ և անցել: Յես և Հուսիկ վարդապետը (այժմ յեպիսկ.) վկա յեղանք թե ինչպես իրար ծեծեցին «առաքինի» վարդապետն ու պոռնիկ կինը, վորը պահանջում եր իր բարձերը ու «վարձը» Յես առ ամոթն սպառնացի կնոջը և հազիկ գուրս քշեցի վանքից:

Ահա մի յեպիսկոպոս՝ վորին մի աղջկա ազգականները (ինչպես քննության ժամանակ լսում եր) զարկեցին զաշույնով ուղղակի սրտի մեջ և յեթե գա-

շույնի ծայրը ուժեղ յեպիսկոպոսի հաստ կողի վրա կոտրված չը լիներ, նա մեռած պիտի լիներ: Կարձում եմ որինակները, վոր մեկն ասեմ:

Անառակության առատ հունձ եր տալիս և ամուսնալուծությունը: Պառակտված ամուսինները դիմում եյին սինող և ապահարզան եյին պահանջում: Նրանց գործը ճգծգվում եր տարիներով, տասնյակ տարիներով, Խնդրատուններն ստիպված եյին լինում անձամբ Եջմիածին գալ աշխատելու: Յեթե կինը գեղեցիկ եր, գեղեցկությունն եր հաղթում, իրավունք ստանում կըրկին ամուսնանալու: յեթե գեղեցիկ չեր և մարդը հարուստ եր, հարստությունն եր արդարանում:

Յեկ սինողի մեջ աշխատանքները բաժանելիս, սինողականները ամուսնալուծական գործերի սեղանի վրա գորսի եյին կոտրում, վոր այդ մասն իրենց ընկնի:

Մի ամուսնալուծական գործում, սինողը արդար և ճանաչում մարդուն. շքեղ կինը շտապում և Եջմիածին, յերկու որ ու զիշեր հյուր. և լինում սինողի նախանդամին և ահա յերրորդ որը նոր վծիու: Կինն անմեղ ե, իրավունք տալ ամուսնանալու, մարդուն զրկել կրկնամուսնությունից:

Մի ամուսնալուծական գործի համար մե յերիտասարդ կնոջ վիճակվում և Եջմիածին գալ իր ազգականի և նոր նշանածի հետ. ծանոթ վարդապետներից մինը (այժմ յեպիսկոպոս) խոստումն ե անում սինողում աջակցել գործի հաջող յելքին: Փաստերը բացարձակ անմեղ են ճանաչում կնոջ: Կինը հեռանալիս քաղաքավարական պարտք և համարում մանել վարդապետի տունը շնորհակալություն անելու: Վարդապետը իր աշխատանքի վարձն և խնդրում, միամիտ կինն ասում

և «փող չունիմ մոտս, ուրախությամբ կը գրեմ հորս և նա ձեզ կուղարկի հարյուր սուրլի»:

— Վայ, իմ խնդրածս փողը չե, ասում ե վարդապետը ու չոքելով զրկում գեղեցկունու վոտները: Սակայն այս անգամ իր սովորական հաշվի մեջ սիսալում և «կուսակրոն» հերոսը, կինը թքում ե չոքած աղոթավորի աչքի մեջը, գոռում վրան, գուրս ե գալիս, նրանածացուին պատմում, վորը կամենում է մտնել վանականի մոտ և խեղդել, կինը չի թողնում և բավականանում են մի խայտառակ նամակով, վոր գրում ե տղան «սուրբ հորը»:

Վերջին ժամանակներս անառակությունը սիստեմների յե վերածված: Կան վոր ամուսնացած ծառաներ են պահում հարաբաշ դառնում: Կան վոր ջահել «աղախիներ» են պահում, շուռշուռ մարդու տակիս, կան ել վոր յերթնեկներ են ընդունում, կան ել վոր «աղքական», «յեղբոր աղջիկ», «քեռու թռո» անուններով են սրբագործում պահնկությունը:

Հայ ազգի թշվառությունը քաղցած, աղքատ գաղթական աղջիկներով ու կանանցով լցրեց վանքը: Հատեղիք աղախիների սիստեմը:

Բանն այնպիսի ծավալ ստացալ, վոր թ. Թաղեսայանը «Հորիզոն»-ում մի հոգված ապեց և Եջմիածինին անվանեց «մեծ անառականոց»: Կաթողիկոսն այս հողվածի տպագործության տակ մի խիստ հրաման արձակեց «Ղանական Խորհրդին»՝ յերեք որվա ընթացքում հեռացնել վանքից լողոր կանանց և աղախիներին: Սակայն այդ ջոջերը, վոր այժմ հլու հնագանդություն են պահանջում ստորագրյալ վարդապետներից, և զումեկը «աղախին» հնացըրեց և բանի տեղ չլրեց կաթողիկոսի հրամանը: Այդ 1920 թ. եր:

Այժմյան վաճական կյանքին և աշխարհայացքին «կուսակրոն» բառը անախրոնիզմ ե, անպատշաճ և կեղծիք: Այդ ամբողջ վաճականության համոզմունքն ե, ամենափոքրից սկսած մինչև ամենամեծը:

Խրիմյան կաթողիկոսը միշտ դեմ եր արտահայտվում կուսակրոնությանը և ծաղրում: Իզմիրլյան կաթողիկոսն ասում եր. «Իրքե անհատ մը, իրքե իզմիրլյան կընդունեմ, վոր ամուրիությունը անառակություն կը տրամադրե, բայց իրքե կաթողիկոս, չեմ կընար փոխել այդ կարգը. այդ աղքային ժողովի գործ ե»:

Գնորդ ե. կաթողիկոսը քահանաների կրկնամուսնություն մտցրեց առանց ազգ-յեկիեղ. ժողովի և լավ արեց, վորպեսզի այրի քահանաներին անառակությունից ազատի և զավակներին փրկի գեշ ազդեցություններից:

Անառակության հետ սերտ կապված ե թալանը, գողությունը: Հասկանալի յե թե թալանն ուր ե գնում:

Հայ ժողովուրդ, չարախնդություն չե, վոր ինձ ստիպում ե գրել այս տողերը. յերեք: Այդպես ել պիտի լիներ, քանի կեղծ կուսակրոնությունը կա, շատ ել չեմ մեղադրում ամուրի անառակներին: Բնախոսականի վերաբերմամբ մարդը նման ե անասունին. նա իր հատուկ մոռւրը պիտի ունենա, վոր քիթը չը խորթի ուրիշի մեջ:

Դու, հայ ժողովուրդ, կենդանի յեկեղեցին դու յես, վերջ տուր այս ֆասարեր ամուրիությանը, ինչպես վերջ տվին անգլիական, գերմանական, չվեցարական և այժմ ուսական «կենդանի» յեկեղեցիները:

Ցես ցավում եմ կեղծիքի վրա, վոր անրարոյականություն ե, վոր վերագործում ե ինձ խորապես. ցա-

վում եմ քո տղա ու աղջիկ զավակների վրա, վորոնք տգեղ բարքեր են տանելու վանքերից դեպի կյանք։ Պաշտպանիր զավակներիդ պատիվը, բարոյականը. հեռացրու նրանց վանքերից և շտապիր վանդել դարշամուրիությունն այն տնօնքը։

Ճշմարիտ եմ ասում, յեթե հարաբերական սրբություն, մաքրություն կա վանքերում, ելի նրանց մեջն և, վորոնք տասնյակ տարիներով մի կին ունին, վորովիք ունին, ընտանիք են կազմում, ամուսնավոր են։ Նրանք միայն բնական մահով են մեռնելու, մինչդեռ «ամուրի» վանականների $80^0/0$ -ը վեներական ախտերով են տափ մտնում։

Ամեն տեղից ձեն տուր ու կանչիր, հայ ժողովուրդը Թող կորչի ամուրիությունը յեկեղեցուց։

Թող կորչի պղծությունը խցերի, խորանների, ասձարների։

Թող կորչի անառակ վանականությունը,

ՍՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՔՐԻՍՏՈՆԵՅՑՈՒԹՅՈՒՆ ԶԵ

Ավետարանի կրոնը սոցիալական պարտաճանաւ-
չության կրոն ե. այսինքն՝ մարդու մեջ այն գիտակ-
ցությունը և զգացմունքը պիտի պաշտվի, վորով մարդ
պարտավոր և զգում իրեն իր նման մարդուն ծառայելու:

Այս պարտաճանաչությամբ վոգեորվելու և գոր-
ծով արդյունափորելու վառ ձգտութիւն ե իսկական կրո-
նը: Այս կրոնը հասկանալի յէ միայն սիրով դեպի մար-
դը. սերն ե պատկում քրիստոնեյությունը:

Իսկ ինչ վոր լոկ ձեւ ե, ձես ե, արարողություն,
մարդկային բանականության հակառակ խոսք, այն
քրիստոնեյություն չե, այլ մոլորություն, տգիտու-
թյուն, սնահավատություն, սնապաշտություն:

Ուր սնապաշտություն կա, այնտեղ մաքուր քրիս-
տոնեյություն չը կա: Մնահավատության մեջ մեռնում
և քրիստոնեյությունը:

Մնահավատության դեմ կովելը՝ նշանակում ե կըռ-
վել տղիտության դեմ հոգուտ քրիստոնեյական կրոնի
և մարդկության:

Հայոց յեկեղեցին իր հին շրջանում կովել ե սնա-
հավատության դեմ կախարդության, մոգության, վըհ-
կության, զբացության և այլն, վորոնք, հին հեթանո-
սական կրօնների մնացորդներն են քրիստոնեյության
Հայոց յեկեղեցին նույն իսկ պատժական որենքներ
ունի այդ և նման մոլորությունների դեմ:

Սակայն վերջին ժամանակներում սնահավատու-
թյունը վոչ միայն վիշտ չի պատճառում յեկեղեցուն,
այլ մինչև անգամ քաջալերություն և գտնում. իբրև
կանոն մտել ե հետին դարերի «Մաշտոցների» մեջ, ու
սրբագրծվել վորպես կրոնի մասն:

Այդպիսի ծիսարանը նախատինք և ավելացրանի մաքուր ուսման:

Բացեք մեր յեկեղեցու մաշտոցը՝ ծնուաբանը և դուք կը գտնեք այսպիսի կանոններ.

1. Կանոն գիշերվա աղոթքի, վոր կառարվում և ծանր հիվանդների վրա, վոր ցավից բժշկվեն և մեղքերից աղատվեն:

2. Կանոն խաչալվա անելու բոլոր մարդկանց, վոչխարների, բույսերի և տունկերի բժշկության համար:

3. Կանոն դժվարածին՝ հղի կնոջ:

4. Կանոն նորածին մանկան տունը փարատելու,

5. Կանոն դիմահարներին, լուսնոտներին բժշկելու համար:

6. Կանոն սկիճ և մաղմա որհնելու:

7. Կանոն ժամի զգեստ որհնելու:

8. Կանոն գիրք որհնելու:

9. Կանոն աղ որհնելու:

10. Կանոն մատաղ որհնելու:

11. Կանոն զանգակ քշոց որհնելու:

12. Կանոն ջրհոր որհնելու:

13. Կանոն սերմ, շեղջ, կար այգի, ճնձան որհնելու:

14. Կանոն յերաշտի:

15. Կանոն գլուխ կնդելու և այն:

Պարզ ե, վոր այս «կանոններով» ներշնչում ևն ժողովրդին թե կարդալով կարելի յե հիվանդին բժշկել և մեղքերից ել աղատել բժշկություն պետք չե. հիվանդ բույսերն ու տունկերը աղոթքով կարելի ե բուժել, ուրեմն զարմանել պետք չե. հղի կնոջ դժվարածնությունից աղոթքով կարելի յե աղատել, սւրեմն բըժիշկ և տատմեր պետք չեն. նորածին մանկան տունը,

վոր որհնեն, սատանաները կը փախչեն և յերեխան անմնաս կը մնա: Աղոթքով կարելի յե հոգեկան հիվանդներին, ընկնավորներին (հպիլեպտիկ) բժշկել, ուրեմն բժիշկներ պետք չեն: Ջրհորի ջուրը առանց որհնելու թույն կը դառնա, վատառողջ կը լինի: Աղոթքով կարելի ե անձրն քաշել ամպերից. աղոթքով պետք ե գլուխ կնդել, վոր ցավ ու չոռ չը դիաչի և այն, և այն:

Այս սոսկալի հակաքրիստոնեցության դեմ բողոքում և քրիստնեցությունը, բողոքում մարդկային բանականությունը, բողոքում են բնության որենքները:

Այդպիսի սնահավատությունների պաշտպանությունը քաջալերություն և տղիտության և նաև մարդկային կյանքի, վոր գիտությունից ոգտվել չը կամենա:

Մեկ խոսքով այդ ամենը խայտառակություն ե, ճեթանոսական վճկություն ե, մոգություն ե, վոր ծածկում են քրիստոնեյական վառ քողով:

Կը հարցնեք ինչը են այս ամենը: Վորովհետեւ այդ ամեն կանոններն առանձին առանձին վճարովի յեն, անաշխատ ապրուստի աղբյուր հոգեսր գասի համար:

Մեր աժմյան ըմբռնումների ժամանակ, այդ ամենը՝ վորպես բիծ քրիստոնյական յեկեղեցու վրա, պետք և չնշվեն. բայց ավաղ նոր փարիսեցության, դրանց դեմ վոչ միայն ձայն չի լսվում, այլ քաջալերում և յեկեղեցին իր լուսությամբ և նույն խոկ ներդրակերպ:

Վերջերս հանդես ե յեկել մի նոր սնահավատություն, գլխավորապես Նոր-Բայազեղի շրջանում. այսպես անվանենք այդ սնոտի գործը՝ փահլանների պաշտամունք:

Փահկանները կամ քյանդրբազները խաղում են լարի վրա. թող խաղան. բայց ճառում են թե իրենց շնորհքը ստացել են սուրբ Կարապետից. նրա հետ կենդանի հարաբերության մեջ են, տեսիլքներում տեսնում են նրան, խոսում նրա հետ, նրա կամքը հաղորդում են ժողովրդին և վայ նրան ով վոր ո. Կտորապետի կամքը չի կատարի, ինչ պատիժ ասես կը թափի վրան: Ի՞նչ ե նրա կամքը. մատադ անել, ուխտ գնալ փահկանին լավ վարձատրել, աջնամբույր ու խաչամբույր շատ տալ և այլն: Ստեղծվում է մի սարսափ միամիտ ժողովրդի հոգիների մեջ, վոր խուժում ե դեպի փահկանը, գեպի ուխտատեղին, ուր փահկանն ե կապում իր լարը, մարգարեյություններ անում. իսկ նրա «յալանչին», տակի մասիսարեն սրախոսություններով «յոթն անվան տեր ո. Կարապետի» անունով փող, մթերք, իրեր ե հավաքում ամբոխից փահկանի և իր ոգտին, վոր սուրբ Կարապետը մեղմանա և չը պատժի ժողովրդին: Իսկ ուխտատեղիներում հունձ են անում հոգևորները:

Ավետարանից գիտենք մենք ո. Կարապետի կամքը, վոր փահկանի հայտարարած կամքը չե. այդ մեծ մարգարեն ապրում եր անապատում, հագնում կաշվեն, ուտում վայրի բանջար և քարոզում եր թե՛ ով յերկու շոր ունի, մեկը չունեցողին տա, ով ուտելու բան ունի, թող սովածին բաժին հանի, հարկահանները թող չը կողոպտեն ժողովրդին, դիմուրները թող թալան չանեն, թագավորը թող լրբություն չանի, քահանաները թող չը խարեն: Ահա նրա կամքը:

Ախր եսպես ել նախատինք կինք վոր թափի վում և Քրիստոնեական կրոնի վրա, ո. Կարապետի վրա:

Ախր անարգվում ե Մեծ մարդը, Հովհաննես Մկրտիչը, վոր իբր թե քյանդրբազին շնորհք տվող «աղեն» ե: Միթե այնքան չնչին մարդ ե յեղել ո. Կարապետը, վոր միայն լարախաղացության շնորհք և ունեցել և միւայն այդ շնորհքն ե տալիս: Իսկ ցիրկերում, ուր ավելի ճարպիկ, զարմանալի խաղեր են անում ցիրկի մարդիկը, ծիերը, վարժեցրած անասունները. բա նրանց շնորհքն ով ե ավել. և ինչ ե քյանդրբազի շնորհքը նրանց շնորհքների առաջ:

Արդ, յեթե յեկեղեցին այսպես, ժողովուրդը ուղարկեա, շահագործվող, լարախաղացները շահագործող, ով ե այդ վողորմելի ժողովրդի սրտացավ բարեկամը, վոր մոլորությունից հանի, սնահավատությունից ազատի, վոր վոչ Քրիստոսի Ավետարանը, վոչ ժողովրդի բարեկեցությունը, վոչ բարոյականն ու կրթականը կուլ չըդնան այդ սնապաշտության:

Հայ ժողովուրդ, մտածիր, ինելքի յեկ, դուրս արք սնապաշտությունից, մի խարվիր, մի լսիր խարերաներին: Քրիստոսն ու Հովհաննես Մկրտիչը քեզ աւատել են կամեցել սուտ պաշտամունքից, կախարդությունից, տղիտությունից և դու այսոր նրանց շնորհքըն ես համարում այն, ինչ վոր նրանք անարգել են և հալածել: Մի վիրավորիր նրանց անունը:

Հայ յեկեղեցական, մի անպատվիր քո կոչումը, դու լույսի առաքյալ ես համարվել, խավարի հետ մի գնա, մի քաջալերի սնոտի պաշտամուքը մի քանի կոպեկ շահելու համար: Ժամանակակից նոր սերունդը վոր ուսում ե առնում, ծանօթանում ե ընության յերեութների և նրանց պատճառների հետ, իրավամք քեզ կը ծաղրի, քեզ իբրև խավարասերի և խարողի կը

հալածի և կը գա ժամանակ, վոր դու ժողովուրդ ել
չես ունենա, յեթե համառես խավարի մեջ մնալ և քա-
ջալերող են բանին, վոր դու ել չես հավատում:

Քրիստոսը, Հովհաննեսը լույսի, ազատության,
ճշմարտության արդարության առաքյալներ են. ով
խարդախում ե նրանց մեծ գործը, նա վոչ քրիստոնյա-
ն, վոչ ոգտակար:

Թող կորչի խաբեյությունը, թող կորչի մնահա-
վատությունը, թող կորչի զրանց քաջալերող փարի-
սեցի յեկեղեցականը, վոր խավարն և թանձրացնում
խեղճ ժողովրդի հոգու աշխարհում:

ԵԶՄԻԱՄՆԻ „ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ“
(Հայ հավատացալների ուժագրության)



Քրիստոնեյական նախկին գարերի յէկեղեցական
գրականությունը, նույն իսկ Ավետարանն ու առաքե-
լական թղթերը վկա յեն, վոր Քրիստոսը բոլոր հեթա-
նոսական կրօնները հիմքից քանդեց իրենց ծեսերով
ու արարողություններով, իրենց շատախոս աղոթքնե-
րովն ու մոգություններով, կախարդանքներով, իրենց
ամբողջ խաբերայությամբ, իրենց ազգային նեղ շա-
հերի պաշտամունքովն ու անմարդասեր ատելությամբ
դեպի ուրիշ ազգեր, իրենց զրհաբերություններովն ու
ձևերով, իրենց բոլոր դասակարգերով, վոր հիմնված
եին ծայրահեղ անարդարության և անհավասարության
վրա:

Աշքի ընկող փաստ ե, վոր Ավետարանը հեղա-
փոխական մի զորեղ կոփվ ե հարուստների և հոգևոր
դասի գեմ, աշխարհիկ և հոգևոր միապետների դեմ:

Այս հին, փթած կրավակարգի և կեղծ բարեպաշտության ավերակների վրա Ավետարանի հիմնադիրն ու նրա աշակերտները կառուցին յեղայրության, ազատության, արդարության, ճշմարտության մի բարոյական կազմակերպություն, վոր Կոչվեց քրիստոնեյական կենդանի համայնք:

Այդ անգլանիկ համայնքը չուներ վոչ յեկեղեցի (հատուկ շենք), վոչ իշխանություն, վոչ ծես, վոչ արքորդություն, վոչ զոհաբերություն, վոչ դասակարգ:

Այդ մի համայնական կազմակերպություն եր, ուր մեկը ծառայում եր ամենքին և ամենը մեկին: Նրանք՝ այդ հազարավոր բազմությունը հավասար աշ-

խատում ելին, հավասար վայելում, ինչոքս մի ընտառիքի անդամներ, առանց ցեղի և սեռի խորության:

Նրանց մեջ տիրող բարոյական կապը սերն եր. սեր գեպի մերձավորը, նման մարդը, և սերը նրանց համար Աստված եր: Քրիստոսը նրանց համար սեր եր և կենդանի գործ:

Այսպէս եր նախնական քրիստոնեյությունը, քանի վոր հավատացյաների համայնքը կազմված եր բացառապես ժողովրդի աղքատ, աշխատավոր զանգվածից:

Յերրորդ դարու կեսերից քրիստոնեյական գաղափարների ուժգին քարոզը ձևնորսների, բանվորների, արհեստավորների, գյուղացիների, սարուկների և տանջվածների կրակ խոսքով սարսափ ագգեց բոլոր աշխարհիկ և հոգևոր միապետներին, բռնականներին, շահագործող հարուստներին և նրանց վոսկե զորությունը շարժեց:

Սարսափահար վերին դասերը յուրատեսակ տարերական հեղափոխության առաջ ստիպվեցին քրիստոնեյություն ընդունել ձևականորեն և նոր կրօնի անունով պահեցին իրենց գիրքերը, աղավաղելով նախնական քրիստոնեյության վորին, մացնելով նրա մեջ ևն հինը, հեթանոսականը իր բոլոր ձևերով, ձևերով սնապաշտություններով, իշխանությամբ:

Աշխարհիկ միապետները իրենց կարգերի որինակով ստեղծեցին հոգևոր դաս, կաշառեցին նրանց կյանքի բարիքներով, դաշն կապեցին նրանց հետ և Քրիստոսի անունով ծանրացան տանջված բաղմության վրա. մեկն իր Փիդիքական ույժով, մյուսը՝ Քրիստոսի անունով:

Հոգիների և մարմինների բռնության դեմ բողո-

քեցին իսկական քրիստոնյաները վորոնց դեմն յեկան պաշտոնական յեկեղեցին և պետությունը անեծքով ու կրակով, բանտով ու մահով:

Նրանց անվանեցին աղանդավորներ և կոսորեցին բյուրերով:

Հեթանոսությունը իր մաքառման շրջանում այնքան արյուն չի թափել, վորքան Քրիստոսի անունը կրող պաշտոնական յեկեղեցին:

Հայոց յեկեղեցին նույն պաշտոնական քրիստոնեյական յեկեղեցիներից մեկն և Հայաստանում մաքուր և յեղել քրիստոնեյությունը, քանի հալածվում եր, քանի կոտորվում եցին քրիստոնյաները: Պետական կրոն գաւնալուց հետո, նա յեղել է թագավորների զինակիցը ընդգեմ ժողովրդի և յերբեմն ել փորձեր և արել նույն իսկ աշխարհիկ իշխանությունն ել իր ձեռքն ամփոփելու:

Հայոց յեկեղեցին ստեղծել և նվիրապետություն, իր ժամանակի տիրող վոգու համաձայն, միապետ կաթողիկոսով, վոր հակառակ և քրիստոնեյության: Հոռովար թագավորները համարվել են ժողովրդի ընտրյալ բայց իրոք այդպիս չե. նրանց ընտրել են «թագավորն ու նախարարները, իշխաններն ու պատմները, զորավարներն ու պաշտոնյանները, հարուստներն ու հալվածատերները»:

Ժողովրդի անունն և շահագործվել. նրան թողել են տգիտության, խավարի մեջ, կտրել են գաղափարական աշխարհից, թեն դիբ ու զրականություն ենք ու նեցել, վոր միայն հոգևոր և իշխանական դասի սեփա-

Կանությունն է յեղել, կապել են ծեսերի հետ, սար-
չափեցրել են հանդերձյալ կյանքի պատիժներով և
իրեն վոշարի՝ բուրդը խուզել, կաթը կթել և ապա
մորթել ու միսը կերել, ուրիշ խոսքով՝ քամել են:

Աշխարհիկ և հոգեոր միապետները առաքինու-
թյուններ են ստեղծել ու քարոզել իրենց ոգտին,
խեղեկով իմացականությունը ժողովրդի մեջ, վոր ա-
վելի բարձր և քան առաքինությունը:

Յեզ մենք դարեղար, սերնդե սերունդ առանց
խորը թափանցելու այդ յեկեղեցու ներսերը, մի զլուխ
վողեսրդել ու ջատագովել ենք նրան, արժանիքները
չափազանցը և փառաբանել:

Բայց պիտի գար ժամանակ, վոր իմացականու-
թյունը զորանար տանջված ժողովուրդների մեջ և հե-
ղափոխության փոթորկով կործաներ այդպիսի իրա-
վակարգերը, ըմբռնութենք ու թխովի առաքինու-
թյունները:

Յեզ աշխարհի յերեսին փշեցին վերածնության
գարի կրօնական հեղափոխությունը, Ֆրանսիական
մեծ հեղափոխությունը, Անդլիականը, իսկ այսոր հա-
մաշխարհային մեծ հեղափոխությունը Ռուսաստանի հե-
րոսական ույժերով և նրա ահարկու շնչով գահեր խոր-
տակվեցին, գահեր են յերերում անդունդի բերանում
և ինքն՝ աշխարհի իւկական տերն ու տնորենը՝ ժողո-
վուրդը նոր կյանքի արշալույսն և վողջունում: Հեռու
հին որերի խեղդող մղձավանջը:

Հեղափոխությունները մեռելությունից դեպի հա-
րություն կանչող զանգերն են, թմրությունից արթ-
նացնող կոչնակները:

Սական հայոց յեկեղեցին՝ իր մասնակի արժա-
նիքներսի հանգերձ, իր ավանդական, հեքյաթական
քու՝ մեջ մրափում եւ նա լսելու ականջ չունի, տես-
նելու աչք չունի, հարություն առնելու շնորհքը չու-
նի, սիալն ու մոլորությունն ուղղելու բարոյական
արիությունը չունի:

Իս իր թմրության մեջ, ինչպես յերազում, միշտ
մի աղոթք ունի. «Մեծի Աթոռույս Սրբո Կաթուղիկէ
Եջմիածնի անշարժություն և անսասանություն»:

Այդ հոգեոր անշարժության մեջ պետք է մեռնի
նա, ինչպես ածխածնով վարակված հիվանդը:

Նա վերջին հերն արձակելիս աչքը մի անգամ ել
պիտի բանա ու տեսնի, վոր ժողովուրդ չունի, մենակ
ե ու մեռնում ե, և այդ որը հեռու չե հենց այժմ ել
աչքի ասաջ ե:

Թվում եր, թե վերջին աշխարհաղղորդ դաղա-
փարների հեղափոխությունը վոտքի պիտի հաներ կի-
սամնու յեկեղեցին հանձին իր մնացած մի բուռն կրո-
նավորների, վորոնք պետք և վազելին գեպի կենդա-
նաբար զափափարները, զեպի իրենց հեռացած ժողո-
վուրդը, ձուլվելու նրա հետ: Բայց... խեցկետնի հա-
մար իր քարածայոն և սիրուն, գորտին իր ճահիճը,
խոզին իր ցեխի յոգարանը, մեռնողին իր անկողինը:

Վոչ մի շարժում, վոչ մի հառաջաղիմական քայլ:
Այդ դեռ բավական չե, հայոց յեկեղեցին գործնական
քրիստոնեյության որերում, վոր խորտակում ե ամեն
մի ձեւականը, յերբ ժողովուրդը յերեաը թեքած նրա-
նից հեռանում ե, նոր-նոր խավարամիտ, հետաղեմ
գործեր ե անում և ախմարալար կարծում ե թե ժա-
մանակի արագաւալաց անիվը հետ տալ կարող եւ:

Այդպիսի մի տկարամիտ քայլ և «Եջմիածնի Գերագույն Խորհուրդ» ստեղծելը:

Այս, վարպետարեն թխված անունը լսողի վրա այն տպավորությունը կարող է գործել թե յեկեղեցին ժողովրդականանում ե, հոգեոր միապետությունը իր փեշերն ե հավաքում: Բայց այդպես չե:

Մենք տառապում եյինք հակաքրիստոնեյական միապետականությունից և յերագում եյինք մի ժողովրդավար յեկեղեցի, մինչեւ «Գերագույն Խորհուրդը» գառնում ե մի խարազան հոգեոր միապետի անունով և նրա ձեռքում:

Փաստերը կիսաստատեն այդ ճշմարտությունը. բայց տեսնենք նախ թե ինչպես թխվեց այդ «Գերագույնը» և վորոնց անմաքուր ձեռքերով:

1923 թ. անսան ամիսներում Եջմիածնի յեպիսկոպոսները ինչ վոր գաղանի քչփչոցի մեջ եյին: Այդ Խորհրդակցությունների հետեանքով Մեսրոբ արքեպիսկոպոսը ճանապարհորդեց Թիֆլիս, Գանձակ, Բագու Այդտեղից բերել եր առաջնորդների, մի քանի քահանաների և նույնքան ել աշխարհականների ստորագրությամբ, մի մի գիր, միակերպ վոճով ու բովանդակությամբ, թե, կամենում ենք, վոր «Գերագույն Խորհուրդ» լինի:

Այս թղթերի հետ միասին Եջմիածնի հինգ յեպիսկոպոս խմբագրում են մի ուրիշ թուղթ, մի վերջնագիր կաթողիկոսին, վորին անվանում են անզութ, անփույթ, անսիրտ, ապիկար, վորին վոչ վրք չի լսում, նկարագրում են յեղեղեցու անկյալ վիճակը, վոր վերագրում են կաթողիկոսին և գործադուլի ու այլ սպառնալիքներով պահանջում են, վոր իրենցից կազմի

«Գերագույն Խորհուրդ»: Գրում են մի կոնդակ իբր թե կաթողիկոսը ինքնահօժար կամքով «Գերագույն Խորհուրդ» և կազմում: Մանում են կաթողիկոսարան, կարգում իրենց սպառնալիքը և ստիպում են կաթողիկոսին կողակն ստորագրելու: Յեվ սարսափահար կաթողիկոսն ստորագրում ե ու հայ ժողովրդին իր յեպիսկոպոսների հրամանով խարում, թե ինքնահօժար կերպով «Գերագույն Խորհուրդ» և կազմում:

Թղթերը ներկայացնելուց առաջ, վերջին վայրեւին իմ ձայնն ել շահելու համար տալիս են ինձ կարգալու և ստորագրելու:

Յեթե յես անծանոթ լինեյի այդ հայ յեպիսկոպոսներին, վորոնցից վոչ մի լավ բան չեմ սպասում, գուցե գայթակղվեյի, բայց յես բողոքավոր կարծիք ներկայացրի, վոր կարևոր եմ համարում առաջ բերել այստեղ:

«Նորին գերագալության ա. տեղապահին հայրապետության հայոց՝ Խորեն արքեպիսկոպոսին, Մայր աթոռի միաբան Բենիկ ծայրագույն վարդապետից ամենախոնարհ կարծիք:

Զերդ բարձր սրբազնություն. Ամսիս 29-ին հրավիրեցիք ինձ ձեր բնակարանը կարգալու մի դիմումն Ամենայն Հայոց հայրապետին. վոր գրված և ստորագրված ե Եջմիածնի միաբանության կողմից և առաջարկեցիք ինձ ել ստորագրելու, յեթե համաձայն եմ:

Ինձ համար միանգամայն անակնկալ եր այդ թուղթը. այս խնդիրները, վորոնք առաջ բերված են թղթի մեջ. ամիսներով գաղտնի խորհրդակցության նյութ են յեղել մի քանի յեպիսկոպոսների համար, վո-

թին չեն մասնակցել և վոչ մի վարդապետ, մինչդեռ
հայոց յեկեղեցու պատմության մեջ յես չգիտեմ մի
գեղք, վոր ընդհանրական յեկեղեցու կաղմակերպու-
թյունը փոխելու խնդիր լինի առանց վարդապետների:

Այնտեղ ակնարկված ե և մի «արձանագրություն»,
վոր ինձ համար մթին աշխարհ ե: Յես չը զիտեմ թե
այդ ինչ արձանագրություն ե, վորի հիմունքով կազմ-
վել ե գիմումը, ավելի ճիշտ վերջնագիրը (ուլտիմա-
տում):

Հասկանալի յե թե ինչու դժվարացա գրիչ վերց-
նել և անմիջապես ստորագրել մի թուղթ, հայտնի խո-
չոր ինդիրների թուղթ, վորոնց լուծման շուրջը դա-
տապություններ չեմ լսել, վորոնց վրա դատողություն-
ներ չեմ տվել և ժողովականների նպատակին ու տրա-
մադրության միանգամայն անձանոթ եմ:

Յերկրորդ՝ գրի մեջ միանգամայն համաձայն եմ
այն նկարագրությանը, վոր վերաբերում ե հայոց յե-
կեղեցու անկյալ վիճակին. սակայն, շարունակության
մեջ կան խոշոր կետեր, վորոնց առջե կանգ եմ տո-
նում, վորոնց լուծման վրա որ ու գիշերներ պետք ե
մտածեմ, վոր խզմիս հետ հաշտ մնալով, մտքերիս լու-
սավորությամբ կարողանամ թուղթն ստորագրել: 33
տարվա միաբան եմ, աշխատել եմ, բարոյապես ու ֆի-
զիքապես տանջվել յեկեղեցու ասպարիզում և հանկարծ-
պիտի ստորագրելի մի թուղթ առանց ինձ հաշիվ տա-
լու թե ինչ եմ անում. իսկ ժամանակը կարճ ե, մի
գիշեր միայն կա տրամադրությանս տակ, վորովհետեւ
գուրք առավոտուն թուղթը պետք ե ներկայացնեք:
կարճ ժամանակում չեմ կարող հաշիվ տակ խզմիս, մըտ-
քիս, փորձառությանս, վոր ստորագրեմ:

Յերրորդ՝ թղթի մեջ ասված ե, վոր Հայոց հայ-
րապետը անսիրտ ե, անփույթ ե, գպրոց, թերթ ունե-
նալու վրա չի մտածում, հրամաններ ե տալիս վոչ վոք
չի կատարում և այլ մի շարք մեղադրանքներ:

Այդ դատապարտությունը կարգում են ծերունի,
հիվանդ հայրապետին նրանք, վոր ընտրեցին նրան,
նրանք, վոր յեպիսկոպոսական ոծումն նրանից ստա-
ցան, նրանք, վոր նրա պատմությունը հիացմունքով
գրեցին և ի տրիտուր յեպիսկոպոսացան, նրանք, վո-
րոնց համար սիրելի եր հայրապետը, քանի վարդա-
պետ եյին: Նրանց մեջ չեյի յես, վոր նույն հայրա-
պետի ընտրության գեմ գիրք գրեցի, և նրա հետեան-
քով նրա հայրապետության որոք հալածանք կրեցի,
տառապեցա, տագնապեցա, հետամնաց յեղա, սակայն
տարա ամեն վիշտ ու նեղություն:

Արդ, ինչպես ստորագրեմ այդ թուղթը: Յեթե այ-
սոր զգում են թե սխալ բան են արեւ թող վարվեն
ինչպես ուզում են, յես ինչացո՞ւ եմ այդտեղ: Ինչպես
ստորագրեմ:

Չորրորդ՝ Հայոց հայրապետը մեղադրվում ե, վոր
գպրոց չունենք, լավ. գպրոց ունենալու իրավունքը,
վորքան ինձ հայտնի յե, ներկա կառավարությունը
տվել ե, վերադարձ ել և նաև գպրոցի համար մի շենք,
արտոնել և Եղմիածնին իր թերթն ունենալ: Բողոքող-
ները յերբ վորոշումն արին գպրոց բանալ, թերթ հը-
րատարակել և ծերունի հայրապետը մերժեց: Գործ ա-
նող միաբանությունը գործ պետք ե ստեղծեր և դա-
տապարտելի կլիներ ծերունի հայրապետը, յիթե չհաս-
տակեր, չորհներ այդ գործը:

Հինգերորդ՝ մեղադրվում ե ծերունի հայրապետը,

վոր հրամաններ եւ տալիս, բայց կատարող չըկա: Զըկատարողները միաբանությունն եւ յեթե այդ զիտակությունն ունին, թե պետք եւ հայրապետի հրամանը կատարիլի ու չի կատարվում, ով եւ ավելի մեղադրելին: Միթե պետք եւ կամենայինք, վոր Հիսուսի դրոշակակիրն ու քրիստոնյա հայրապետը բանսով ու փայտով կատարել տար իր հրամանները: Այս հակասության հետ ինչպէս հաշտվեմ և ստորագրեմ: Յեթե յես հայրապետի հիմնավոր կարգադրությունը չեմ լսում, ինչ խղճատանքով բողոքեմ հրամայողի դեմ:

Վեցերորդ՝ պահանջվում եւ, վոր Եջմիածնի մեջ ընդհանրական յեկեղեցու համար վարչական նոր կազմակերպություն մտնի գերագույն ժողով անունով:

Յեկեղեցու կազմակերպության մեջ այդպիսի խորագություն կարող եւ կատարել միայն համագույշին ժողովը: Պատմության ժողովրդական սկզբանություններին, յեկեղեցու ավանդությանց դեմ կլինի, յեթե Մ. Աթոռի մի քանի անձինք այդ փոփոխությունն անեն: Զի՞ դատապարտի մեղ ազգը, վոտնձությունն չի համարի այդ քայլն ազգի և հայրապետի իրավանց դեմ:

Այսպիսի պատասխանատվություն ինչպէս հանձն առնեմ ժողովրդի առաջ և ստորագրեմ:

Յոթներորդ՝ քրիստոնյական յեկեղեցին իր մաքուր վիճակի մեջ ընդունակ եւ յեղել և ժամանակակից նոր, բարեբեր աշխարհայացքներ ընդգրկելու և նվիրագործելու, մինչգեռ վերջնագրի մեջ կան հետազիմական մտքեր, վորոնք ավելի շուտ գեղիք կեղծիք կտանեն յեկեղեցին, վոր ինձ համար անհանդուրժելի յեւ Գաղափարներիս հակառակ մտքերն ինչպէս ստորագրեմ:

Ութներորդ՝ ինչ յերաշխավորություն կա թե այդ գերագույն ժողովը ավելի լավ կտանի գործերը քան սինողը, վորի գեմ բողոքող եմ յեղել միշտ և կամ արդի միաբանական ժողովը, վոր սահմանադրություն եւ, վորի վորոշումները միայն հաստատում եւ հայրապետը, վոր ինքն եւ տվել միաբանությանը, ձեռք քաշելով հոգեոր միապետի իրավունքներից, յեթե միենույն անձերը պիտի կազմեն գերագույն ժողովը, վորոնք կազմում են այսոր միաբանական ժողովը:

Միաբանական ժողովին ազատություն եւ տրված վարելու յեկեղեցու գործերը, գերագույն ժողովն հենց այդ եւ, ինչու գժգոն են բողոքողները: Միաբանական ժողովն ավելի ժողովրդական վոգի ունի, վորովհետեւ նրա մեջ ձայն ունին բոլոր միաբանները, իսկ «Գերագունը» պիտի կազմվի սոսկ սահմանափակ թվով յեպիսկոպոսներից առանց վարդապետների, ուրեմն խեղզվելու և միաբանության ձայնը, ստեղծվելու երբուրնիքատ իշխանություն, վոր վարելու և գործերն ու անձերը սպառնալիքով և պատժով:

Յեվ վերջապես մենք ստեղծեցինք նաև «Վահական խորհությը», վոր նույն «Գերագույն ժողովն եր ինչու միայն մի տարի իր գոյությունը պահեց և մեռավ: Ուրեմն գերագույն ժողովը չե, վոր գործ եւ անելու, այլ գերագույն հոգին, վոր պ կաս եւ մեր մեջ: Ինչպէս ստորագրեմ:

Իններորդ՝ վերջնագիրը վերջանում եմ սարսափելի սպառնալիքով. այս եւ յեթե հայրապետը չի կատարի ստորագրող միաբանների առաջարկները, թուղթ ստորագրողները հրաժարվում են բոլոր պաշտօններից. ուրիշ խոսքով գործադրով են անում (զարաստովկա) և

լքում են իրենց հայրապետին: Ի՞նչ կասի ազգը այդ քայլի հանդեպ, մի՞թե ծանր պատասխանատվություն չեն վերցնում իրենց վրա ստորագրողները:

Յեթե հայրապետի և միաբանության մեջ այդպիսի խոշոր անդունդ բացվի և յեկեղեցին այդ անդունդն ընկնի առհավության ձգտումների հետևանքով, մվ և պատասխանատուն: Չե վոր այդ գործադրությունը կը լսվի, միաբանությունը հրապարակով պետք է աշխատի արդարանալ, հայրապետն ել կարող է ինքովինքն արդարացնել ազգի առաջ մեղադրանքը դնելով բողոքողների վրա: Ի՞նչ դուրս կգա դրանից. չե վոր «ամենայն տուն բաժանյալ հանձն յուր ավերեցի»:

Ահա ինչու չեմ կարողանում ստորագրել:

Վերջնագրին անմաս մնալու հիմունքներս բերելոց հետո, յես պատրաստ եմ աղաչելու ձեզ, սրբազն հայր, հետեւյալ առաջարկով. առանց այդ վերջնագրի խորհեցեք ծերունի հայրապետի հետ. յես համոզված եմ, վոր նա ընդառաջ կգա ամեն մի լավ բանի. ծերացել եռ տկար և բոլոր ցանկալի ձեռնարկությունների սկսելն ու կատարելը կթողնի միաբանական ժողովին, միայն թե միաբանությունը ընդունակ լինի լավ գործ անելու, բառնալով իր միջից անհաշտ վոգին, առելությունը, յեսականությունը, մամուռած հինը, վորոնք ըստ իս միակ աղբյուրն են - Եջմիածնի անգործության և անկման:

Իսկ յեթե յեկեղեցու մեջ փոփոխություն պետք լինի, են ել ժամանակի պահանջների համաձայն, խընդրեցեք թող համազգային ժողով գումարի և նա դնի «Գերագույն ժողով», յեթե այդ պետք լինի: 1923. 30 գեկունդերի. միաբան ս. Եջմիածնի Բենիկ ծայրագույն վարդապետ:

Յես լռում եմ այստեղ այն խոսակցությունների մասին վոր ունեցել եմ կաթողիկոսի հետ նախ քան գերագույնի հաստատությունը և հետո:

Յես պնդում եմ վոր կաթողիկոսական վերջին ընտրություններ յեղել են բռնությամբ, առանց ժողովրդի խակալան մասնակցության, մասնավանդ Գեորգ Ե. կաթողիկոսինը: Յես այդ ընտրության դեմ գրեցի «Ի՞նչու հետացանք» վերքը, վորովհետև նախատեսում եյի թե այդ ընտրությունը, վորին ջերմ մասնակցող եյին այդ յեպիսկոպոսներից չորսը, ժողովրդին վոչինչ չի տալու և կործանելու և այն քիչ լավը, վոր մնացել և յեկեղեցու մեջ:

Կաթողիկոսացըրին, շահագործեցին՝ յեպիսկոպոս, արքեպիսկոպոս գարձան, հարստացան, վարեցին կաթողիկոսին ու գործերը, ինչպիս կամեցան, քաջալերեցին անմտությունն և յեկեղեցական ու քաղաքական սխալները, կործանեցին հայ ազգի մեծ մօսը, Հայաստանը ընդարձակ գերեզման գարձրին և այժմ առանց ազգի իրավես գանձնկեց արին, իսպառ իրավագործկ ձևական նախագահություն վերապահելով նրան:

Ինձ ցավ չե, վոր Գեվորգ Ե. իրավագործկ Ե. թերակ ուրախ լինելի, ի հայ հավատացյալ ժողովուրդը հետաքրքրվեր իր յեկեղեցու վիճակով և ինքը գահավեժ զլորել նրան, վոր իր ընտրելին չե յեղել այլ յեպիսկոպոսների. բայց յես ուրախ չեմ, վոր ժողովրդի անունով միշտ ըարբանջող այդ յեպիսկոպոսները, վոր արյունով, ավերակ ու թալանով են զծել իրենց անցած ճանապարհը, առանց ժողովրդի արին գարձյալ այդ մեծ փոփոխությունը:

Լոռությամբ կը համակերպելի, յեթե հայ յեպիս-կոպուները ժողովրդին հրավեր կարդային, վոր նա պար իր ընտրած ներկայացուցչությունը թողներ հա-յոց յեկեղեցին բարելավելու և կառավարելու համար ժամանակի վոգու համեմատ, բայց չը լուցի, վորով-հետև այս նոր կազմակերպությունը կաթողիկոսից գը-րաված յեկեղեցին ավելի դեպի խավարը պիտի գլորեր և զլորում ե. որանք են մարդիկը չեն, վոր ժողովրդի աչքը բանան, վոր յեկեղեցին ե փակել, միտքը բա-նան, վոր լույսից են զրկել և ժողովրդի հետ ընթանան:

Իմ ըմբռնումն ուղիղ եր, փաստերը հետզհետե կը հաստատեն. այդ պատճառով յես բողոքեցի, խոս-տովանում եմ մասամբ ել խղճալով այն կաթողիկո-սին, վոր իր որոք կատարված ավերումների ափին իր մարմին և հոգու ավերումն ե ապրում ծեր ու հիվանդ վիճակով, բայց զիխավորապես նրա համար, վոր ա-ռանց ժողովրդի արին այդ փոփոխությունը:

Հայոց յեկեղեցին, յեթե մի առավելություն ունի, գոնե ձեականորեն, եղ նրա ժողովրդական բնափորու-թյունն ե: Յեկեղեցին ինքը հայ հավատավոր ժողո-վուրդն ե: Նա ե միակ իրավատերը վարչական, ծիսա-կան, դավանական, տնտեսական խոշոր փոփոխություն-ներ անելու յեկեղեցու մեջ: Վոչ կաթողիկոսը, վոչ հոգեոր դասը առանց ժողովրդի այդպիսի փոփոխու-թյուններ անելու իրավունքը չունի:

Հակառակ պարզայում ի՞նչ ե լինում, կորվում և ժողովրդի կապը յեկեղեցուց և ժողովուրդն ել իրա-վունք ունի յերես թեքել հոգեոր «պետերից» իր կապե-րը կարելով նրանց հետ:

Կը հարցնես, հայ ժողովուրդ, ի՞նչ գործ ե արել Գերագույն Խորհուրդը իր տգեղ սկզբնավորության ո-րից, դպրոց բացել ե, թերթ հրատարակում ե, շինա-րարական աշխատանք կատարել ե, վորոնց համար կա-թողիկոսին անվանում ելին անպետք, անփույթ, ան-սիրտ, ալիկար:

Վոչինչ, վոչինչ չի արել, վոչ մի լավ գործ:

Կատարված ապօրինությունը կը մեղմանար իմ աչքում, մի յեկեղեցական մաքրիչ հեղափոխություն կը ճանաչելի յես. Գերագույն Խորհրդի քայլը, յեթե նա անմիջապես ժողովրդի հոգին լուսավորելու համար հանդես գար. յեթե նա հառաջապեմ մտքերի ուժեղ քարոզներով հասկացներ թե՝ յեկեղեցին մի ժամանակ յեղել ե և գիտության, և բարեգործության, և ուսման, և քաղաքականության զեկավար, քանի վոր ոստար բռնավոր իշխանությունների լուծն եր ծանրանում հայ ժողովրդի հոգու և մարմնի վրա:

Մինչդեռ այժմ Հայաստանը իր հատուկ հայկա-կան կառավարությունն ունի հայ լեզվով ու գրակա-նությամբ. գիտությունը, բարեգործությունը, վորե-րի ինամակալությունը, քաղաքականությունը, յերկ-րի վերաշինությունը նրան և անցնում, յեկեղեցուն մնում և Ավետարանի բարոյական գաղափարների քա-րոզչությունը ու համապատասխան կենդանի գործն ու քարոզալի կենդանի, բարոյական որինակը և ջերմ աջակցությունը հայրենիքի վերաշինության:

Այդ կը լիներ մի քայլ առաջ և յեկեղեցին այս կատարյալ անկմանը չեր հասնի, և վարկը կը բարձ-րացներ:

Բայց այդպես չե, բոլորովին հակառակը, ինչպես

վոր յես նախատեսում եյի, ճանաչելով Գերագույն Խորհրդի կազմը: Նա վոչ միայն դրական գործ չի աւրել, այլ բացասականով ե թանձրացրել խավարը յեկեղեցու և ժողովրդի մեջ, շեշտել ե կրօնական բռնությունը, վոր անթույլատրելի ե և ստեղծել ե խավարի տարրինակ թագավորությունը:

«Գերագույնի» որերում նոր-նոր սնապաշտություններ են գլուխ բարձրացրել ժողովրդի մեջ. բըսունկել ու բորբոքվում ե հեթանոսական հմայության, վճկության, կախարդության, խարերայության հոտը ի վնաս մարդկային բանականության և քրիստոնեական մաքուր գաղափարների. և յեկեղեցին փոխանակ հանգցնելու այդ մոլորությունը, փոխանակ մարդկանց հավատքը լուսավորելու ինքն ե հրահրում կամ կրավորակերպ լուռթյամբ, կամ ներգործակերպ:

Կարկուտ կապել, սիրո թալիսմանիր խզբել, ամուլ կանանց յերեխա բերելու գիր անել, գայլի բերան կապել, կորուստները գտնելու բթիկ անել, մազ պատեցնել և իմանալ թե հիվանդը վոր սուրբով կը բժշկվի (ի դեպ, վոչ մի գուշակ Քրիստոսի մոտ չի ուղարկում հիվանդին, այլ մանր-մունը սուրբերի), ջրով, գարիով գուշակություն անել, թիզ չափել, կարտերով մարդկանց գլխին գալիքը գուշակել, հնարված կամ հիվանդ ուղեղի յերազ-տեսիլքներով սարսափահար անել միամիտ ժողովրդին և այլն, սովորական տարածված խարերայություններ են կրօնական գույնով և ժողովրդի հոգին ու նյութականը զոհ են բերվում այս անհավատություններին, վորոնց հնությունը հին տղիտության և հեթանոսական կրօնների մեջն ե թաղված:

Մուսացված ե Քրիստոսը, լույսը, և պաշտում ե տղիտությունը. իսկ յեկեղեցին լուռ ե:

Կոչմանավոր, լուսահավատ ունեցող հոգեորականությունը կարժղ ե տանել այս անարգանքը, վոր արրջում և քրիստոնեյության հիմնաղբին, մարդկային բանականությանը: Ժողովրդասեր յեկեղեցին կարժղ ե անտարբերությամբ զիտել թե ինչպես իր ժողովուրդը կեղեքվում ե շահամոլ անաշխատ խարերաների ձեռքով: Յերբե՞ք:

Յեկեղեցին լուռ ե և որեցոր ավելի են գլուխ բարձրացնում նոր-նոր սնապաշտություններ:

Փահլեանների պաշտամունքը, նրանց հետ կաղված բոլոր նորատեսակ խարերայությունները, վոր ծագալ և ստանում այժմ զավաններում վորակումն ե «Գերագույն Խորհրդի»: Այդ մոլորություններին ույժ են տալիս տպետ, շահամոլ քահանաներից վոմանք, վորոնց զիմին իշխանություն ե լուակյաց «Գերագույնը»:

Յես այստեղ գնում եմ մի քահանայի կեղծ վորգորությամբ արած պատմությունները մի քանի յերկուս անձերի առաջ և իմ ներկայությամբ:

«Մի գյուղում մի մարդու 5 տարեկան յերեխան յերազ ե տեսնում, վոր սպիտակամորուս ո. Կարապետը (նա 34 տարեկան եր, վոր զիմատվեց, մորուքն սպիտակ չեր լինի) հրամայում է նրան առավոտը փահլեանի պարան կապել և խաղալ: Յերեխան իր յերազը պատմում ե հորը. վերջինս բարկանում ե վորդու վրա և խնպիրը չի կատարում: Հետեյալ գիշեր հայրն ե տեսնում յերազում «սիրտակամորուսին», վոր սպանում ե նրան աշքերի կուրությամբ, յեթե յերեխայի ցանկությունը չի կատարի:

Զարթնում ե մարդը... կուրացած աչքերով զղում

ե, մեղա և կանչում, աչքերը հետզհետե բացվում են և վաղ առավոտուն գյուղի մեջ, ժամի մոտ գերաններ ե ցցում, պարան կապում, յերեխայի ձեռքը տալիս ե լարախաղի թարազուն, մի յերկար ձող վոր նրա ծանրությանն հավասար կը լիներ և տանում ե դեպի լարը: Յերեխան անմիջապես վազում ե լարով դեպի վեր և սկսում ե պարել, ազատ, համարձակ:

Ապշած ժողովուրդը հրաշքի զարմանքով լի հարցնում ե մանուկ լարախաղին. ինչպես և վոր չես ընկնում, աղան ժամանով պատասխանում ե ինչի պետք ե ընկնեմ իմ պարանը լայն ե գետնի նման, յես են պես եմ տեսնում. ս. Կարապետն ինձ սովորեցնում ե խաղալ:

Հետեյալ որը հանդիսականներից մեկը պատմում ե, թե գիշերն յերազում ս. Կարապետը յեկավ և ինձ հրամայեց թե յեզդ վազը տանը պահիր և տար թող փահլեանի պարանի վրա խաղա. յես նրան շնորհք եմ տվել: Յերում են յեզան, վոր վագելով, միայն յերկու վոտքով՝ առաջին և հետին (մյուս յերկուաը ողի մեջ) բարձրացնում և պարանի վրա, թոշկոտում և մյուս ծայրից իջնում:

Շվարած ժողովուրդը հրաշքի դիմաց ահ ու դողով ե լցվում և առատ-առատ մատադների և ուխտադրությունների խոստումներ են մեջտեղ գալիս, սկըսվում ե հոսանքը դեպի ուխտատեղիները:

Այդտեղ լինում են հինգ կոմունիստ, վորոնք հրաշքից շշմած գնում են քաղաք, իրենց տոմսերը հետ են տալիս թե մենք հրաշք տեսանք և կուսակցությունից դուրս են գալիս:

Ելի մի հրաշք լսեցեք, վոգեորում ե տերտերա.

14 հոգի գնում են Սեան. նրանցից մինը, մի անհավատը յեկեղեցու պատը կեղասում ե և անարգում հավատը: Վերագարձին նավակը շուռ և գալիս և 12-ին խեղզում. աղատվում են միայն յերկու հոգի: (Թարսի պես, աղատվողը կոմունիստն է):

Լուռ լսում եմ յես և քահանան հոգեոր հափշտակություն—եկատագ պատրաստելով լսող կանանց համար, շարունակում ե ել ավելի հրաշալին: Նույն գյուղում գիշերը յերեք ձիավոր են իջնում մի այրի կնոջ դուռը և նրան զարթեցնում. կինը դուռը բաց ե անում և լսում հետեւայտ հրամանը.—Այ կին, առավոտուն կը գնաս գյուղի մեջ քահանային և ժողովրդին կասես, վոր մատադներ անեն, ուխտ գնան, թե չե հազար տեսակ պատիժ կը թափենք մենք այս գյուղի վրա: Սզաներ, ասում ե կինը, ախր ինձ ով կը հավատա, վոր ասեմ: Մենք քեզ նշան կը տարնք մարմնիդ վրա: Այդ բոպեյին կինը ուսի վրա մի սաստիկ ցավ ե զգում և ուշաթափ լինում: Առավոտյան զալիս են հարեանները տեսնում են կնոջ ուսի վրա թիկունքի կողմից ձիու նալի մի խոր հետք:

Դեպքը հրապարակվում ե, սկսում են մատադները, քահանան վոգեորված ե:

Այս առասպելները լսելիս ես ցավ զգացի, վոր քահանայի բերանով խավարն ե քարոզվում և յեղան հավատացողներ այդ առասպելներին: Յես զայրույթ զգացի, վոր մոլորությունը մթնեցնում ե միամիտ մարդկանց բանականությունը և լոռությունս ընդհաշելով զսպեցի քահանայի կեղծ վոգեորությունը առարկելով նրան և նա ձենը կտրեց:

Այս մի որինակ և միայն այն տարածվող սնապաշտությունների, խավարի աստվածացման, վորտարերական և դարձել «Գերագույն Խորհրդի» որով, վորը կամ լոռությամբ կամ զուցե ներգործակերպ նըպաստում և խավարին, առանց ըմբռնելու թե իր յեկեղեցու վերջնական անկումն և պատրաստում են ել ես որերում, յերբ թուրք լուսամիտ մոլան իր ժողովրդի մեջն ընկած իր մուհարրամի. շախսել-վախսելի տոնն և հայտարարում սնոտապաշտություն, վոր փրկե իր մեջիդի վարկը, իր կրօնի լովը միայն. և են որերում, յերբ Յեվրոպայում քրիստոնյաները պատրաստվում են ժողովներ անելու և կրօնից ու յեկեղեցուց հանելու անհավատալին, հեթանոսականը, առասպելականը, վոր բրիստոնյական լուսավոր գաղափարները փայլ առնեն և ժողովրդի արդի բարոյական պահանջները բավարութեն:

Յեկ այս աճող սնապաշտության դիմաց լուսությունն ինչու համար ե. աշնամբույրի, մոմավաճառության, խաչանամբույրի, միայն ժամանակավորշահի:

Յեկ այս հոգնեան հիվանդությունը համարում են կրօնական շարժումն, կրօնական վոգնորություն:

Վարքան բարձր և հայոց հին յեկեղեցին այս «Գերագույնի» որերի յեկեղեցուց. հինը անհավատությունների գեմ քարոզչություն ունի, գրականություն ունի, նույն իսկ պատժական որենքներ ունի:

Ուրիշ վորեւ գործ, ուրախալի յերեւութ չկա Գերագույն Խորհրդի իշխանության որերում. իսկ ինչ վոր կա, այդ այն ե, վոր այդ աննկարագիր անձերը եջմիածնում նստած մարակն առել ու դադում են իրենց այն միարանակիցներին, վորոնց հետ անձնա-

կան հաշիվ ունին, վորոնք այդ վողործելի նոր պահանջներին խունկ չեն ծխում:

Որինակ՝ 77 տարեկան Բարգուղիմեսս յեպիսկոպոսին 8 ամիս և սովի ևն մատնել, գրկելով նրան և ոռձիկից և պարենից. մարդուն կաթիլ-կաթիլ են սպահում:

Ինչու, վորովհետեւ գրագետ Բարգուղիմեսս յեպիսկոպոսը իր զրքույկներից մեկում նկարագրել ե «գիտնական» Մեսրոբ յեպիսկոպոսին, վորպես տղետի: Պաշտոնական պատրիարքը, այդ ել այն ե, վոր Գերագույն Խորհրդը հիվանդ Բարգուղիմեսս յեպիսկոպոսից պահանջեց մի սենյակ իր բնակարանից հանձնել Ռուբեն վարդապետին. իսկ նա մերժեց, բացատրելով, վոր յերեք բժշկի տված վկայականով նրան յերկու սենյակ անհրաժեշտ ե, մեկումն իր հիվանեռությունը զարմանելու և կարիքների համար, և խնդրեց, վոր իրենք ջահել յեպիսկոպոսները իրենց յերեքական սենյակներից մեկը զիջեն վարդապետին, յեթե անհրաժեշտ ե:

Փոթորկեց «Գերագույնը». բոպեն հարմար եր Մեսրոբի թույնը թափելու ատելի մարդու վրա և վըճիս զրին ծերունի յեպիսկոպոսին մատնել սովի, վոր համարձակվել և նոր իշխանության հրամանը իսկույն չը կատարել:

Յեկ գրանք են Քրիստոսի առաքյալները. նրա վոր ասում եր՝ յեթե յեղբայրդ սոված ե, հաց տուր նրան, ծարավ և ջուր տուր նրան:

Ի՞նչ անի, հայ ժողովուրդ, ծերունի յեպիսկոպոսը. գու չես հետաքրքրվում, կաթողիկոսին զիմեն ապարդյուն ե, պետությունը չի խառնվում. և միթե այս հայը, այս հոգնորականը, այս քաղաքացին սո-

վից պիտի մեռնի և կամ հուսահատությունից կախվի, ինչպես կախվեցին տարիներ առաջ այս յեպիսկոպոսների անգիտությունից Բառնաբաս և Ղևոնդ վարդապետները:

Իմ «կարծիքը» իսկապես կատարվում ե. Գերագույնի անդամները մտրակով հաշիվ են մաքրում, արհամարտնք ու կոպտություն և իրենց թունոտ լեզվի վրա:

Իսկ ուրիշ գործ. վոչինչ չեն անում:

Յես պատմեցի թե ինչ հակաժողովրդական ձեռվ ստեղծեցին Գերագույն Խորհուրդը: Կարևոր եմ համարում նաև զեղուցանել թե ինչ տակետակ հիմունքով կատարվեց այդ ու զործը:

Առաջինը՝ զուտ անձնական յեսական հաշիվների և շահերի հիմունքով, այս հաշվիների լուսաբանությունը յես հետագում եմ ուրիշ անգամվա, յերբ Գերագույն Խորհրդի անդամների նկարագիրը տամ:

Յես կանգ կառնեմ այստեղ մի ուրիշ ներքին շարժառիթի վրա:

Տասնյակ տարիներ Եջմիածինը կոպիտ, ազգավանս և անուղղելի սխալներ ե արել: Այդ սխալները յերկու տեսակ են՝ անգործություն և քաղաքական անմտություն:

Եջմիածինը վերջին տասնյակ տարիներում բացարձակապես վոչ մի զործ չի արել, վոչ գալրոցական, վոչ գիտական, վոչ բարեգործական, վոչ տնտեսական վոչ կրոնական, վոչ շինարարական. վոչինչ չենք տվել ազգին, այլ միայն ստացել ենք ու կերել:

Յերկրորդ՝ յես անվանում եմ քաղաքական սխալ:

Ի՞նչ հարկ կար Ավետարանին հակառակ և կարճամտությամբ. քաղաքական անցուգարձին խառնվեր յեկեղեցին, պատերազմ հորդորելու և մարդկային կոտորածի կրակը հրահրելու դերն առներ իր վրա, հայրապեակի կոնդակի մեջ կոչ գրվեր հայ ազգին թե «զնացեաք կոտորեցեք»: Այդ անուղղելի սխալանքի հետեւ վասնքը, դասն արգյունքը տեսանքը: Կոնդակի այդ խոսքերը հաղորդում ելին Պոլիս և... տարաբախտ հայ ժողովուբզը կոտորվեց բյուրերով:

Կարճամիտները նկատի չունեցան գոնե 18—19-րդ դարերի խոհեմ կաթողիկոսների (մինչև Խրիմյան), ազգություն բացարձակ չեզոքությունը պես-պես պատերազմների ընթացքում, զորի հետևանքով բարոյական հեղինակությունն մնաց հայրապետությունը և նույնիսկ թշնամիներին հարգելի:

Այդ ժողովրդի անմեղորեն թափած արյան ծովի առաջ այժմ ցնցվում ե ամեն մի գիտակից հայ և զարթած զիտակցությունը հաշիվ և պահանջում «այս ի՞նչ արիք»:

Պետք եր բարոյական պատասխանատվությունից ազատավել և ահա կաթողիկոսի նախկին խորհրդականները հետ-հետ են քաշվում պատասխանատվությանից ազգի առաջ, մեղքը բարձում են միայն հայրապետի վրա և իշխանությունը ձեռքից խլելով, կամենում են չքմեղ ձեանալ, թե ահա սխալական կաթողիկոսի իրավունքները մեր ձեռքն առանք, զոր ել սխալ չանի:

Այս մի անարժան աշքակապություն և, բայց կտալը խիստ թափանցիկ. հայ ժողովուրդը տեսնելու յի խակուկան հանցագարտներին բոլորին միասին:

Այդ «Գերագույն» խումբը առաքելական կոչումն ունի, առանց բարեսրտության և առաքելական հոգեգոր բարձր հափշտակության, դրանց համար ամեն ինչ և ամեն վոր իրենց անձին, շահին և փառասիրության և ծառայելու:

Դրանց ձեռքից հեռացան վաճքից ամենաընտիր վանականները՝ փիլիսոփայության դոկտոր և լեզվաբան Յեղիկ վարդապետը, գիտնական Սմբատ սարկավագը, Կոստանդին, Գրիգոր, Պողոս համալսարանական սարկավագները, զույգ Ներսես, Մանուկյան Յերվանդ պատվական վարդապետները, բարի Մամրիք վարդապետը, զիտնական Աբել վարդապետը, յեռանդուն Յեղիշ վարդապետը յերաժշտագետ Ստեփաննոս սարկավագը և մանավանդ աստվածաբանության մագիստրոս, բեղմանվոր հեղինակ Յերվանդ վարդապետ Տեր-Մինասյանը:

Սա հայոց յեկեղեցու վերանորոգության խնդիրը դրեց. գրվածքը խարույկը ձգեցին և հեղինակը իր հոգու այրվելը տանել չկարողացավ, ցավելով ու հեղնությամբ գեպի այս նոր ինկիվիտորները վերարկուն հանեց ու հեռացավ:

Յեզ վերջապես սրանց հալածանքից հեռացավ Եջմիածնից ու խելազարվեց աշխարհահոչակ յերաժշտագետ Կոմիտաս վարդապետը:

Մրանք անապատ դարձրին Եջմիածինը. սրանք փակեցին Եջմիածնի դռները նոր մտնողների առևաջ և բացին ընտիր յելնողների առաջ: Իրենք ել կմեռնեն և Եջմիածինը իրեն-իրեն կըգոցվի, ինչպես զրել ու գուշակել ենք շատ առաջ: Մրանց ազգին ճանաչեցնելու համար եմ յես զրել տարիներ առաջ «Եջմիածնի

արդարությունը», «Անարդարության յերեսից», «Հայրապետական ընտրություն», «Ի՞նչու հեռացանք» գըրքույկները և բազմաթիվ հրապարակախոսական հոդվածները շատ թերթերում:

Մրանք ու իրենց նմանները հայ հոգեորականությունը կաստա զասակարգ դարձրին ուրույն շահերով իրենց գործելակերպով հեռացան ժողովրդից և վերջինը նրանից. մոռացան, վոր կրոնը, յեկեղեցին, գիտությունը, ամեն ինչ ժողովրդի համար և և ինչ վոր ժողովրդին չի ծառայում նա պետք չե և վնասաբեր:

Այդպես ել հակաժողովրդական և «Գերագույն Խորհուրդը»:

Հայ ժողովուրդ, հայ յեկեղեցական, յեպիսկոպոս, վարդապետ, քահանա, գյուղացի, արհեստավոր, մտավորական, վոր ձուլված եք ընդունում ձեզ հայ ժողովրդի հետ, յեթե հետաքրքիր և ձեզ համար ձեր յեկեղեցու կյանքով զբաղվել, չարիքը վերացնել, փառաթյունը հեռացնել, չը պետք և անտարբերությամբ լըսեք, պետք և ձեր իրավունքին տեր կանգնեք և թույլ չը տաք, վոր այդ թխովի «Գերագույն Խորհուրդը» կոխոտե ձեզ, ձեր յեկեղեցին, ձեր ժողովրդին:

Պետք ե ցըեք այդ «Խորհուրդը», յեթե ինքը խոռնեմություն չի համարի ինքն իրեն լուծել և պետք և ազգային-յեկեղեցական ժողով գումարելով յեկեղեցին բարելավեք ավետարանի և ժամանակակից աշխարհահայացքի հիմունքներով:

ԴԻՄՈՒՄ

ՀԱՅ ՔԱՂԱՆԱՅՈՒԹՅԱՆ



Քահանա չեղբայրներ,

Հոգուս մեջ կուտակված շատ մտքեր ունիմ, վոր կուզեյի հազորդել ձեզ բայց հնարավորություն չունիմ ձեզ բոլորիդ մեկ տեղ տեսնելու. ուստի պարտք համարեցի այս համառոտ թղթով խռով ձեզ հետ գոնե մի քանի կարեսը հարցերի մասին:

Քրիստոսի Ավետարանը և տառքելական թղթերը՝ հավատացյալներին բարոյապես զեկավարելու համար, ճանաչում են միայն յերեցներ (քահանաներ): Յեպիսկոպոս, քորեպիսկոպոս, վարդապետ անունները, վոր հետո յեն մտել և դասակարգություն ստեղծել առաքելական դարում մեկ իմաստ ունին. ամեն յերեց յեպիսկոպոս եր, վարդապետ եր. չը կար խորություն, չը կար մեծ ու փոքր, չը կար տեր ու ծառա. բոլորն ել հավասար եյին մի նոր վորդիների նման, յեղբայրների նման հավասար իրավունքներով և նման պարտաւանություններով:

Յերեցությունն ել վարձու պաշտոն չեր, ցման կապանքներ չուներ, այլ ազատ կոչումն. և այդ ազատ կոչման մեջ նա ավելի լավ եր ապրում, քան վարձու պաշտոնյան:

Յերբորդ դարում աշխարհիկ իշխանության կադմատկերպության ձևով և նրա ազգեցությամբ, Ավետարանի վոգու հակառակ կազմվեց հոգևոր նվիրապետություն աստիճաններով, դասակարգերով, հրամաններով և հնագանգությամբ. և համապատասխան տիտղոսներով՝ «Նորին Սրբություն», «Նորին Բարձր Սրբազնություն», «Նորին Գերաշնորհություն», «Նորին Սրբազնություն»

«Նորին Բարձրապատվություն», «Նորին Արժանապատվություն». քահանային ել կոչեցին «Նորին Բարեկբոնություն»:

Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կանելին առաքյալները, յեթե Քրիստոսը համաձայներ խոստանալ Զերեթիայի վորդիներին՝ Հակոբոսին և Հովհաննեսին, նրանց մոր խնդրանքով, բարձր աթոռները տալ իր մոտ, իր թագավորության մեջ։ Անշուշտ կասելին՝ եղ ի՞նչ ես առում, վարդապետ, մենք ես անիրավ աշխարհի տիրող ու տանջող մեծերից ազատվելու համար թողինք մեր ձկնորսությունն ու յեկանք քո յետեից, հրապուրվելով քո խոստումով թե՛ քո թագավորության մեջ հազարություն և արդարություն կը լինի. այժմ դու ել ես ուզում մեծ ու փոքր, տեր և ծառա ստեղծել. վոր եղանք ե՝ մենք կը գնանք մեր ձկնորսության։

Անշուշտ այսպես կասելին և կանելին։

Ի՞նչ եր ասում Հիսուսը՝ դուք բոլորդ հավասար եք, անմիտ ե նա, ով կամենում ե մեծ լինել այս աշխարհի իմաստով. ով վոր կամենում ե իմ թագավորության մեջ մեծ լինել, նա ամենքին պիտի ծառայի։

Հակառակ Քրիստոսի այս մեծ գաղափարի, քրիստոնեյական յեկեղեցին ստեղծեց կենտրոնական իշխանություն բարձրադիր աթոռներով, վորին ստրկական ծառայությամբ յենթարկեց յերեցությունը, այն կոչմավոր յերեցությունը, վորի վրա յե կանգնած կենզանի յեկեղեցու ժողովրդի հավատը։

Հոգեոր կենդրոնական իշխանության լուծը հետքեւշե ծանրացավ քահանայության վրա կազմվեցին ստրկացնող որենքները և նա տարավ այդ ստրկական վիճակը հակառակ իր կոչման և սովորությամբ

հաշտվեց զրության։ Նա այլևս ազատ առաքյալ չեր, այլ կամակատար ծառա հոգեոր չինովնիկության։

Վերջին մի քանի տասնյակ տարիներում հայ քահանան իր բարոյական ու նյութական կացությամբ ամենաարհամարելի դասն յեղավ հոգեոր վերին գասերի առաջ։

Ո՞վ ե ձեզնից այն բախտավորը (բացի կոնսիստորիայի անդամներից, վոր առաջնորդների աչքերն են ու ձեռքեզը միայն ձեր թերությունները տեսնելու և ձեզ ճնշելու համար), վոր մի քաղցը վերաբերմունք տեսած լինի, մի մարդապարի խոսք լսած լինի հոգեվոր իշխանավորներից, յեթե զատարկ ձեռքով եք ներկայացել։ Հավատացած եմ վոչ վոք։

Դուք՝ ժողովրդի հետ ձուլված քահանաներ, միայն մոռացության, արհամարանքի հանգամանք ունեք այդ իշխանության առաջ։

Մի՞թե չեք հիշաես որերով, ժամերով քարշ եք յեկել յեղիսկոպոսների գոներում, վոր ձեզ ընդունենք, ձեր գարդը լսեն. միջնորդներ եք ձեզել կոնսիստորիայի հարարա անդամներին, կամ յեպսկոպոսի ծառայի բուռը մի բան եք սլացրել վոր հաջողի ձեզ զողեզող ներկայանալ։

Ձեր այդ ընդհանուր զրության պատկերը ձեր առաջը զնելու համար հարյուրավոր դեպքերից մեկը՝ մի որինակ պատմեմ, մի քահանայի պատմած։

«Ծատ աղքատ եմ, մուրալ ամաչում եմ. ժողովուրդն արդյունք չի տալիս, տերտերությունն ինձ ես որի հասցրեց. Մեկ որ կնոջս ասացի՝ այ տիրունի, յերեք գրվանքա յուղ ունինք և մեկ հավ. արի դու հավը կարմրացնենք, յուղն ել վերցնենք յես ու դու

զնանք սրբազնի մոտ կինս հավը գրկեց, ևս ել յուղն. դատարկ ձեռքով իշխանավորին ներկայանալ չկ լինում: Գնացինք վոր իմ ու կողջս մերկությունը աշքով տեսնի: Իմ քահանա լինելս յիրեւմ եր միայն մի ցնցոտի զլիարկից. մնացած շորս բանվորի ցնցոտի յեր: Գնացել եյի, վոր խնդրեմ հայ տերտերների համար Անգլիայից ստացված քառասուն ըեռ կտորներից մի վերարկվացու տա, վոր քուրջերս ծածկեմ:

Նստանք գուռը. յեկան ու գնացին, զնացին ու
յեկան՝ կին մարդ, աղջիկ, ծառա. մենք նստած ենք
ժամերով. կոնսիստորի անդամին եմ հայտնել խնդիրս.
վերջը՝ գուռսկ ինչ ցավացնեմ, կոնսիստորի կոկիկ
հազնված անդամը զուրս յեկավ, բղավեց վրես, դուրս
գնացեք, բոլ չե նստեք մթոռուպի պես, կտոր չը կտ
Ամօթահար, խայտառակված, վեր կացանք ընկանք
ճամբա, անիծելով են որը փորը տերտեր յեղա»: Յեղ-
բայրներ, դուք սրանից ել ավելի սրտածմիկ որինակ-
ներ գիտեք. բայց մի քանիսն ել բերեմ,

Գնում եմ լեռնային ճանապարհով. հեռվում նը-
կատում եմ մի ճամբորդի, քայլերս արագացնում եմ,
վոր հասնեմ ու խոսակից գտնելով մենակության
Ճանձրույթս փարատեմ. Հասա. գըզգըզված հաղուս-
տով, արեխները ծակ, մատները գուրս ընկած մեկն
ե ճամբորդը, միայն զիսին քահանայական զիսարկի
խոնացած, քրտինքի կեղառվ փայլոն մի զիսարկի
կատ Բարեկ տվի. տերտե՞ր ես, հարցրի: Հա, տերտեր
եմ, բայց տերտերությունիցս մնացել է միայն ես գը-
խաչի կտորը, ախ քաշելով պատասխանեց ջաճ՝ լ
տերտերը. հիմքի խկապես մշակ եմ, գնացել եիի արագ

Հունձ անելու, վոր մի քանի լիտր ցորեն աշխատի՛ յերեխաներս պահելու համար։ Յես շատ ապահով յերիտասարդ եյի. լավ յերկրագործ. տերտերի թռո եյի. սափացին թե, գուքահանայի ցեղ յես գուտերտեր յեղիր։ Յերեք տարի գնացի ու յեկա գործիս համար՝ գործակալին, սինող, կոնսիստոր։ Ծախեցի յեզներս, կովերը, բալորը տվի նրանց, վերջապես տերտեր յեղա։ Հիմի ել ապրուստ չունիմ, ժողովուրդը տուրք չի տալիս, Եջմիածինն ել խոկի չի հարցնում թե տերտերներս ապրում ենք թե մեննում։ Ահա եսպիսի տերտերներից մեկն ել ես եմ։

Մի ուրիշ քահանա՝ Ալիքուչակ գյուղից, գտն
աղքատության յերեսից ենքան բանեց Սարգարապա-
տում, վոր ուժապառ յեղավ, վերապարձավ ու իսկույն
մեռավ, սովոր գրկում թողնելով իր յերեխաներին:

Մի յերբորդ, վոր ուսել ե ծեմարանում մինչեւ
վեցերրորդ դասարան, այսոր շրջում ե ցնցոտիների
մեջ, վոր ծածկված են հին գլուզական ուսուների կա-
պույտ պալտոյի հնոտիով ու զարդարված ե փայլուն
կոճակներով, իր գարզն ե լալիս. «առաջ քահանա եյի
և ուսուցիչ. վերջինս բովանդակություն եր տալիս իմ
գոյության, սոճիկն ել բավարար եր, ապրում կյի.
այժմ վոչ ժողովրդից ոգուտ կա, վոչ ուսուչությունն
չոգուս մեջ ել մի կոփվ կա. ախր շատ ծես վոր կա-
տարում եմ, չեմ հավատում, կեղծիք եմ անում ու
ինձնից ամաչում. զե ես մեր վարդապետ յեպիսկոպոս-
ներին ել գիտեմ, նրանք ել չեն հավատում. բայց նրանց
անհավատ արարքը ազգը առատ վոսկով ե վարձատը-
րում, իսկ մեր փեշակը՝ վոր նույնն ե, մեզ դառն ազ-
քատություն ե բերում:

Մի որ տղես ասաց. հայրիկ, յես ուզում եմ կոմ-
սոմլ գառնամ, միտք արի ու պատասխանեցի, գնա,
վորդի, գնա ժողովրդի հետ, մենք ել ժողովութի չու-
նենք; Յես ել մտածում եմ վերաբերուս հանեմ, վար-
ժապետ դառնամ, թե չե ախր խկի բանի պետք չեմ
ու քաղցած, բա մեղք չեն իմ յերեխաները»:

Այսպիս արհամարված եք դուք, քահանա յեղբայը-
ներ ու այսպիս խեղճ: Մի բացառություն կարող եք
ցույց տալ միայն. այդ ձեր ծեռնազրության նախորդ
որն ե, յերբ վոսկի եք համբել սրբազն հայրերի
առաջ յերբ ձեզ սիրով են վերաբերվել և կամ յերբ
ներկայացել եք բեռներով:

Ի՞նչպես ցավում եմ, վոր մոռացել եք զիտակցել
ձեր կոչումը, ձեր պատիվը:

Ախր դուք եք, վոր ձեր ժողովրդից հավաքել եք
յուր, պանիր, պաղի, աթոռահաս, հոգեբաժին, մատաղա-
ցու կով, վոչխար, գառ, ձու և հազար տեսակ նվերներ
այս ու այն պատրվակով, վոր ձեր իշխանությունը
կուշտ ու կուռ ապրի, իսկ դուք ապրել եք հողագործի
չարքաշ կյանքով և ժողովրդի կամավոր տուրքով,
վոր այժմ փոխվել ե անտարբերության և արհամա-
րանքի:

Դուք ուրեմն ի՞նչ եք յեղել. միայն հոգեոր հար-
կանաններ հոգեոր պետերի համար, վորոնք առատու-
թյան յեղջուրից վայելել են առանց ճակատ քրտնեց-
նելու, իսկ դուք մնացել եք միշտ աղքատ և արհամար-
ված: Ի՞նչ եք կարծում այսպէս ե յեղել Քրիստոսի և
թշակերտների հարաբերությունը: Ի՞նչ կանելին
առաքյալները, յերբ Քրիստոսը առատության մեջ ապ-
րեր, իսկ աշակերտներին քաղցած, թողներ: Յես դի-

տեմ ինչ կանելին. Նրանք՝ վոր աղնիվ ըմբոստացու-
մով աշխարհի հղորների անարդարության դեմք յե-
լան, կըմբոստանային իրենց վարդապետի դեմ և կա-
սելին՝ դու, արդարության քարոզիչ, անարդարու-
թյուն ես գործում, մենք քեզ չենք ճանաչում:

Ձեր այժմյան տնտեսական վիճակը, յեղբայրներ,
ծանրանում և սրտիս վրա. ձեր քահանայապետներն
ու զիտացիները ձեզ համար «վողորմած մամարացին»
չեն, այլ վիրավորող և ճանապարհի վրա ձգող անցնող:

Եղ զրկանքի և արհամարանքի փոխարեն դուք
գոնե վորուե բան սովորել եք, ուստի եք ձեր իշխանա-
վորներից. հավաքել են ձեզ, հետաքրքրվել են ձեզնով
ու ձեր ժողովրդով, յեկել են ձեզ ու ձեր հոտին այ-
ցելության: Ձեր ժողովուրդը, վոր գյուղից դուրս չի
յեկել, վեղար տեսել ե. վճչ: Բայց դուք զիտեք, վոր
հին գարերում կաթողիկոսներն անդամ անձամբ ըլլ-
չում եյին և քարոզում, և ուսուցանում:

Պարզ ե. ուրեմն, վոր վոչ մի կառ չը կա ձեր,
ժողովրդի և հոգեօրականության մեջ, բացի նյութա-
կան կապը, վորի քաղցրությունը միայն վերինն և վա-
յելում:

Ձեզ առաջնորդներ են տալիս. ախր դուք վոչ մի
ձայն չունեք, վոր կարողանաք ասել, այս առաջնոր-
դը մեզ անհարմար ե, մեր ցանկացածը տվեք: Յեկ
դուք դեռ պարտավորվում եք այն բոլոր այլանդա-
կությունները տանել, ծածկել, ինչզոր ձեր առաջնորդ-
ների անձն և ստեղծում: Զայն ել հանեք, ձեր պա-
տիվը պատիժն ե:

Այսպիս չե, ուղիղն ասեք, ձեր իողձմտանքին
հարցըք:

Այս վիճակը լքումն ե փոել ձեզ վրա. չը կտ այսոր մի քահանա, մանավանդ գյուղերում, վոր չանիւծի այն որը, յերբ ցման քահանայության դատապարտվեց և զրկվեց թե բարոյական ազատությունից և թե հալալ աշխատանքից:

Հոգեոր բարձր իշխանությունը իր անպարտաձանաչության շնորհիվ, իր մեկուսացման մեջ իրավես բաժանվել և ձեզնից ու ժողովրդի զանգվածից և այդ պատճառով ժողովրդի կապը կրօնական կյանքի հետ կարվել եւ:

Ճշմարիտ չե՞ որինակը վոչ մի մտավորական ինտիլիւնտ համարված մարդ իր ամբողջ կյանքում ձեր ժամը չի մտել և չի հաղորդվել: Ուրիշն մտավորական դասի մեջ գուք ժողովուրդ չունեք:

Ճշմարիտ չե՞ վոր այժմյան ջանել սերունդը վոչ ձեզ և ճանաչում, վոչ յեկեղեցին: Ուրիշն գուք գալիք որերում ժողովուրդ չեք ունենա: Մնում են ծերերն ու վշտացած հարուստները, վորոնց ժամ զալը չի բղխում կրօնական զգացմունքից, համոզմունքից, այլ կողմնակի, անցարական հանգամանքներից և ծերության պարագ սովորությունից: Ախր նրանք ել իրենց վայելքի որերում յեկեղեցի չեյին զալիս:

Եղ մասն ել լիքն ե ափելի շատ սնոտիապաշառությամբ, քան քրիստոնեյական զաղափարների վոգերությամբ, վորին ծանոթ ել չե՞ Մոտոխապաշտությունը կայուն բան չե, այդ մի խավար ե. վոր շուտով կշքանա զիտակացության և զիտության լույսի առաջ: Ուրիշն գուք կը զրկվեք և այդ ազոթավարներից: Ժողովուրդն իր ճամբով կերթա և դուք՝ ձեր, ձեր ճամբեն անզունդով ե վերջանալու:

Հենց այժմ դուք յերգեցող չունիք, տիրացու չունիք. դուք մենակ թե քահանա եք, թե տիրացու թե ժողովուրդ: Ճիշտ չե՞:

Մի հարցրու թե ինչո՞ւ այդպես յեղավ: Շատ պարզ պատճառով. վորովհետեւ յեկեղեցին, վոր միշտ ժողովրդի հետ և յեղել հնումը. այժմ իր ամբողջ կառուցումով, իր հինցած ու այժմյան մտքին բան չասող ծեսերով հետ և լուկել զարձել և կեղծիք: Յեկեղեցու վերին շերտերը տպականել են իրենց պղծություններով: Կեղծիքով, գողությամբ, հզիացումով, ծուլությամբ:

Մարդիկ իրենց բանականությանը հակառակ բանին չեն հավատում:

Ի՞նչ եք անում դուք, յերբ ձեր հինցած տունը վէլելու վրա ե. խո չեք թողնի, վոր վիշի ձեր զիմին—վոչ, դուք քանուում եք հինը, վիթածը և նորն եք կառուցանում ավելի լավ ձեռով:

Յեկեղեցին ել եղակն ե. հինը նորով պետք ե փոխվի:

Եզ նորի իիսէր պետք ե լինի նօմարտուքյունը, արգարուքյունը, լույսը, հավասարությունը, սերը, ահա ինչ վոր ավետարանական ե յեվ անմահ: Ինչ վոր կեղծիք ե, այն զուրու պետք ե ձգվի թե գավանենից, թե վարչականից, թե ծիսականից, թե կենցաղականից:

Ովքեր են կազմակերպել հինը, վոր մի ժամանակ նոր և յեղել. ձեզ նման քահանաներ, վոր ձեզնից աշվելի լուսավոր չեյին. ինչու դուք այժմ չեք կարող վերակազմել միայն ավետարանի հիմունքով:

Հին յեպիսկոպոսները այսպիսի պատժական ուրենքներ ել ունին քահանաների և ժողովրդի վերաբերությամբ. ձեծել աղվեսազրոշմ դնել ճակատին, ջիւերը կտրտել բանտարկել և այլն:

Այդ որինքները պաշտոնապես փոխված չեն: Բայց չը կան: Ուրիշն ամեն հինը լավ չե և փոխելը անհրաժեշտ:

Դուք սրա վրա մտածեցեք և պահանջ դրեք յեկեղեցական ժողով գումարելու, ուր անելիքներ կը պարզվեն:

Մտավախությունը մի կողմ դրեք. թե հինը քանդենք, նորը չենք կարող շինել. միւնույն և հինը անխուսափելուուն քանդվելու և, յեթե գեռ չի քանդվել: Յեթե հայ ժողովրդին պետք և յեկեղեցի. նա իր ուղած ձևով կը շինի: իսկ յեթե պետք չե, չի կամենա, թող չը շինի:

Դուք ժողովրդի հետ ձույլ մնացեք. ձեր կյանքի նպատակը դարձրեք ժողովրդին ծառայելը, ինչպես վոր Ավետարանն և պահանջում:

Մի քարոզեք այն, ինչի վոր դուք չեք հավատում և չեք կատարում. մի քաջալերեք սնոստիապաշտությունը մի քանի կոպեկի համար, այլ ցրեցեք նախապաշտունքները, ժողովրդի բարեկեցության գործին աջակցեցեք խոսքով և անձնական որինակով:

Մեր յերկիրն իր մոխրակույտից հարություն և առնում, վերաշինվում և. չեք կարող աչք փակել, խըզճմանք ծալել, վոր հսկայական ջրանցքներ են կառուցվում հսկայական անջրդի հողեր վոստիկելու համար, գպրոցների ցանցով կապվում յեն իրար հետ գյուղ ու քաղաք, ճանապարհներ են չինում, ելեքտրական լույսերն են ընդարձակվում, հիվանդանոցներն են բազմանում, ճամալսարաններ են ստեղծվում, գրադարաններ են հիմնվում ու ճոխանում անող գըրքերով և այլն:

Վերաշինվող հայրենիքի վերաշնորհներին, ով կուել ինի, որառվ ոգնեցեք և քաջալերեցեք անխարդի կերպով:

Ով կը հանդիսանա մեր խեղճ յերկը համար «վողորմած սամարացի» նա մեր հարգանքին և արժանի և աջակցության: Այդ և իսկական քրիստոնեյի պարտքը:

Պահեցեք ձեր այս հավատը թե բարի, ժողովրդաշահն խոսքն ու նրա գործադրությունը, վոր բղխում և սիրուց, հրաշք կը գործեն. և այդ տեսակ հրաշքի մեջ կը բարձրանաք դուք և ժողովրդին սիրելի կը դառնաք, վորովհետեւ նրա հետն եք. և դուք քաղցած չեք մնա:

Այլապես ձեր վերարկուն նախատանքի վերարկու կմնա և ձեր բաժինը դառն հիասթափությունն և և ծանր զջումը:

Յեթե այդ վերարկուն նախատական և և ձեր ներքին մարդը բողոքում և նրա գեմ ու դուք նրա մեջ հարություն առնել, վերափոխվել չեք կարող, հանեցեք. թող վերարկուն և շքեղ զգեստը հագնեն նրանք, վորոնք արտաքին փայլով մի ապականված հոգի և մասմին են ծածկում: Մի վախճանաք, դուք նրանցից բարձը կը մնաք:

Դուք զիսեք, վոր եջմիածնի ամենաընտիր վարդպետները վերարկուն հանեցին ու զնացին գեպի մայր ժողովուրդը, բայց նրանք միշտ բարձր մնացին ձեզ տիրող յեպիսկոպոսներից: Նրանք մի հանցանք ունին, վոր անձայն զնացին. բայց այդ ել մեղմանում և այն հանգամանքներով, վոր նրանք չեյին կարող ձայն հանել, վորովհետև սինոդը կը գրեր նահանգապետին և վերջինս նրանց բանաը կը տաներ: Խոպատմական որինակներ ունինք, վորոնք ցույց են տալիս թե հրապարակում և ականջե ականջ ազատություն շշնջացող և բռնության գեմ ըողոքող սինոդը ինքը Քրիստոնի մարդասիրությանը և բոլոր ավանդներին դավաճանելով, ամենաղաժան բռնություններն և գործ զրել:

Զեղ մեկն հիշեցնեմ. 1850-ական թվականներին տեղեկանում են, վոր Արքավակի գյուղում մի քանի տուն թոնքակեցիք կան, վորոնք յեկեղեցու ծես, արարողություն չեն ճանաչում: Սինոդը բողոքում է նահանգապետին: Նահապապետը նրանց բանադրություններն և գործ զրել:

Սինողը այդ պատժով չի բավականանում. զիմում ենորից նահնանգապետին և պահանջում, վոր նրանց մահվան պատիճ տան:

Մեր սրբազնների գաժան անգիտություննից և
բանությունից շատ ժամանակ չե, վոր յերկու թուլա-
կամ ջանել վարդապետներ պարանով կախվեցին ու
խեղդվեցին. մեկը եղմիածնում իր խցում, մյուսը
Մուղնու վանքում:

Մի վախենաք նրանցից, վոր ձեր մարմինն են սպանում սովոր, այլ վախեցիք նրանցից, վոր ձեր հոգին ու մարմինն իրար հետ գենենն ե ձգում. և ի՞նչ ե այդ գենենը, յեթե վոչ ձեր հոգու հակասությունից առաջ յեկած տանջանքը, խղճահարությունը, ամոթանքը, վոր ուզեք չուզեք պիտի տեսնեն, զգան և ուրիշները:

Քաջացեք, քահանա յեղբայրներ, գոտեռը վեցեք
Հիսուսի ծշմանտությամբ և արդարությամբ, հարու-
թյուն առեք թմրությունից, լցվեցեք առաքելական
խանդավառությամբ և պահանջեցեք ձեր յեկեղեցուց,
ձեր իշխանությունից, ձեր նյութական խեղճության
բարեփոխություն, պահանջեցեք նրանից հոգիների վրա
ըրնանալու վերացումն, պահանջեցեք կենդանի գործ
հոգուու ժողովրդի, պահանջեցեք վերջ տալ ավերին ու
թալանին, կաշառքին ու պղծության, պահանջեցեք
փառած հնի վերացումն, պահանջեցեք յեկեղեցական-աղ-
գային ժողով:

Զեր այս արդար պահանջներին և հայ ժողովրդի
կրոնական լուսավորությանը ընդառաջ կգա և ձեզ
կաջակցի սիրով՝

Միշտ ձեր յեղբայր

ԲԵՆԻԿ ծ վարդապետ:



Ա. Տ

ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

Դիմել գրավաճտուներին

3499